

388.522

Ն. ԲԱԶԲԵՐՈՒՆԻ

ԷԶՄԻԱԾՆԱԿԱՆ  
ԻՆՏՐԻԳԱՆ

ԵՒ

ՆԲԾ. ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

(ՊԵՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՏԻԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՆԱՆ ԳԱԳՏՆԻՔԸ)



ԹԻՖԼԻՍ

Հասկրանցօ, Երկաւեախնակայա, № 17  
1912

281

P-22

1-OCT 2009

281

Բ-29

Ն. ԲԱԶԲԵՐՈՒՆԻ

Է Զ Մ Ի Ա Ծ Ն Ա Կ Ա Ն  
Ի Ն Տ Ր Ի Գ Ա Ն

ԵԻ

ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

(ՎԵՋԻՆ ԿԵԹՈՂԻԿՈՍՏԱԿՆ ԸՆՏՐՈՒԹՆԸՆ ԳԵՂՏՆԻՔԸ)



ԹԻՖԼԻՍ

Արագածիկ «Հայկերանո», Նիկոլաեռինսկայա, № 17  
1912

29.08.2013

7163

8005 130



5686  
38

1950 - 91

### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն


Կատարւեց կաթողիկոսական ընտրութիւնը: Դա արդէն փաստ է, իրողութիւն:

Սակայն այն, ինչ որ տեղի ունեցաւ՝ անսպասելի էր բոլորի համար: Մարդիկ լսում են անհաւատալի իրողութեան մասին և չեն կարողանում հաւատալ: Չեն հասկանում թէ ի՞նչպէս եղաւ, որ պատահեց այս բոլորը:

Ընտրութեան հետևանքների առաջ բերած դժգոհութեան հետ միասին, մեր հասարակութեան մէջ մեծ հետաքրքրութիւն է առաջացել՝ իմանալու գաղտնիքը—ախր ի՞նչպէս եղաւ, որ ժողովրդական և ոչ ժողովրդական ներկայացուցչութիւնը հաւաքւելով էջմիածին՝ ընտրեց նրան, որին չէր եկել ընտրելու: Տալով ընդհանուր հասկացողութիւն առհասարակ կաթողիկոսական ընտրութեան հարցի մասին և մասնաւորապէս ներկայ ընտրութեան պայմանները քննելուց յետոյ, ես բաց եմ անում բուն գաղտնիքը, մերկացնում քողարկեալ անձնաւորութիւնները, հաւատարիմ մնալով իմ և շրջապատիս ճանաչած՝ փաստերի ակներև ճշմարտութեանը:

Մի քիչ յետաձգելով մեր աշխատութեան

հրատարակութիւնը, գուցէ էլ աւելի մշակած, պարզաբանւած յաջողէր տալ մեր գործը. սակայն ի նկատի ունենալով որ հասարակութեան բուն հետաքրքրութիւնը ճգնում է օր առաջ իմանալ ճշմարտութիւնը, մի բան որ զլանում է հարազատութեամբ տալ նորան մամուլը, ուստի մենք շտապեցինք, սահմանափակելով միայն դէպքերի ընդհանրացած ճշմարտութիւնների շրջանում, պարզել իսկական, ընդհանուր պատճառները, հրատարակել գաղտնիքը:



## Ա. գլուխ

Մեր հասարակութիւնը եւ կաթողիկոսական ընտրութեան խնդիրը

### I.

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը մեր ժամանակի խոշոր հասարակական նշանակութիւն ունեցող մի հարց է:

Իմ կարծիքով էականը այն չէ, որ տարբեր հասանքների պատկանողները տարբեր ըմբռնում ունենինչպէս եկեղեցու, այնպէս էլ նրա պետի՝ իբրև մեր ազգային կեանքի յառաջադիմական նշանակութիւն ունեցող մի ֆակտորի մասին:

Կարևորը այն չէ թէ վերաբերմունքը երբեմն բացասական է լինում շատերի կողմից, որոնք ամեն բուպէ պատրաստ են ժխտել ու բացասել, առնւազն նսեմացրած գոյներով պատկերացնել մեր ազգային կեանքի այդ կարևոր գործօնը:

Նշանակալիցը այն փաստն է, որ այսօր մեր հասարակութեան բոլոր խաւերը մեծ հետաքրքրութիւն են ցոյց տալիս, իրանց խօսքն ասում, վերաբերմունք են արտայայտում օրւայ խոշոր հարցի մասին:

Այդ դեռ քիչ է. հասարակական խաւերը դուրս են գալիս մասնակի հետաքրքրութեան շրջանակից և իրանց մասնակցութեամբ գալիս են, կամայ թէ ակամայ, կարծէք յաւերժացնելու մեր ազգային եկեղեցին իւր համազգային ընտրեալ միապետի հովանու ներքոյ:

II.

Եկեղեցին ապրում է մեր միջավայրում իբրև հասարակական մի հիմնարկութիւն. և նրա հասարակական նշանակութիւնը և արժէքը հասկանալու համար անհրաժեշտ է նախ ճանաչել հէնց այդ հասարակութիւնը:

Իսկ որևէ հասարակութիւն ճանաչելու համար, անհրաժեշտ է նախ յստակ հասկացողութիւն ունենալ, թէ ի՞նչ է հասարակութիւնը, ի՞նչ է նրա բնորոշ արտայայտիչ կողմը: Այդ՝ նորա, հասարակութեան, իբրև ամբողջութեան, կոլլեկտիւ գոյութեան առաջին պայմանը, վճռող մօմենտը՝ հասարակական ոգին է, որ շեշտւած ինքնուրոյնութեամբ, ապրում է անհատների մէջ:

Եւ այդ ոգու գիտակցութիւնը, նրանով ապրելը, մտածելը, զգալը, տիրելն ու ուրախանալը, ոգևորելն ու յուսահատուելն է, որ մեղանից իւրաքանչիւրին կապում, անրաժան մասն է դարձնում՝ ամբողջին: Եսական անանձնայատկութիւնների գիմաց շեշտող միատեսակութեանը, ընդհանուր նմանութիւնը՝ առաջ բերելով իւրաքանչիւրիս մէջ ամբողջի մասը, անդամը լինելու գիտակցութիւնը, զբոլում է մեզ պարտաւորութիւններ ճանաչելով, նրա շահերին, առաջադիմութեանը ծառայելու:

Նրա շահն ու ֆառը, բախտաւորութիւնն ու անբախտութիւնը և այլն համարում ենք մերը—անձնականը: Ճանաչելով նրան, իբրև մեր-սեպհականը՝ գատում, ջոկում, հակադրում ենք միւս հասարակութիւններին:

Հայ աղգը ցրիւ եկած լինելով երկրագնդի բոլոր կողմերում, ամեն տեղ առանձին գոյութիւն պահպա-

նող, ի սփիւս աշխարհի տարածւած փոքրիկ համայնքների համագումար է ներկայացնում:

Այդ համայնքներից իւրաքանչիւրը հեռաւորութեան, օտար ազգեցութիւնների և այլ պատճառների զօրութեամբ տկարացած ապրում է դեռ ևս որոշ ինքնուրոյնութեամբ, չձուլւած օտարների հետ:

Հայրենի երկրից, մայր հողից հեռու, վաթանը կորցրած մեր փոկրիկ համայնքները օտար երկրի ազգեցութիւնների տակ, աստիճանաբար խորթանում են, մոռանում հայրենի աւանգութիւնները, սովորութիւնները, կորցնում են ազգային ոգին, գաղափարներն ու իդէալները: Օտար երկիրը, օտար քաղաքակրթութիւնը, կեանքը՝ ի վերջոյ ձուլում, խառնում են հայկական փոքրիկ գաղութները համապատասխան ազգութեան մէջ, ուր վիճակւած է ապրել փոքրաթիւ հայերին:

Այսպիսով, ժամանակի ընթացքում վտանգւում է հայ հասարակութեան ամբողջութիւնը, թուլանում է նրա գոյութեան պայմանը՝ նրան բնորոշող ազգային ոգին:

III.

Եւ եթէ կայ մի ոյժ, զօրութիւն, որ շատ ու քիչ յապաղում է, ժամանակաւորապէս պահպանում է ազգային ոգին, նրա ամբողջութիւնը, մի միութեան մէջ ամփոփելով երկրագնդի զանազան կողմերում ցրուելած հայերին—այդ հայութեան, իբրև որոյն ազգութեան՝ գաղափարն է, իսկական ոգին, իսկ դրա շեշտողը և պահպանողը՝ մնացել է միայն և միայն մեր ազգային կրօնը՝ Լուսաւորչի եկեղեցին:

Այն ժամանակ, երբ մեր ազգային ամբողջութիւնը պահպանող քաղաքական կեանքը սկսում է

քայքայել և ի վերջոյ հասնում է կատարեալ անկման, աստարեզի վրայ մնում է եկեղեցին, որ 1600 տարի, շարունակ, մեր անցեալ քաղաքակրթութեան առանցքն է կազմել: Եւ նոյն այդ եկեղեցին, կրօնական պահանջներին բաւարարութիւն տալուց զատ, նա է եղել այն միակ հանգրեանը, յենարանը, որին ապաւինել է մեր ժողովուրդը, որը նրանով է խրախուսել ու ապրել երկար դարեր: Միաժամանակ եկեղեցին է եղել, ինչպէս շատ ազգերի, այդպէս և առանձնապէս հայ ազգի գիրն ու գրականութիւնը, նրա հոգու հոյակապ արտադրութիւնները, ճարտարապետութիւնը և այլն պահպանողը:

Եւ գրականութիւնը ներկայիս մտքով, ինչպէս որ սովորական ֆրազով ասում է—հասարակութեան կեանքի, նիստ ու կացի, սովորութիւնների, յոյզերի ու մտքերի, մի խօսքով ամբողջ կեանքի՝ հայելին է, է և հասարակութեան առանձնայատկութիւնները շեշտողն ու հասարակութեան տարբեր հատկանքների մէջ ընդհանուր ազգային միութեան ոգու զարթնեցնողը և պահպանողը:

Եւ մեր կեանքի, այսօրւայ մեր ազգային ինքնապահպանութեան գոյութեան առաջին հիմնաքարը համարելով մեր գրականութիւնը իւր մի շարք ձևերով ապրում էր եկեղեցում, նրա ծոցից էլ ծնւեց:

Մեր եկեղեցին չի սահմանափակւել բացառապէս ինքը իւր մէջ. նա իրագործել է ազգային կեանքի զանազան ֆունկցիաները, պահպանելով բազմաթիւ զըպրոցներ ժողովրդի մէջ և ժողովրդի համար, նա չի զրկել վերջնիս իւր մասնակցութիւնից. սակայն նա, յանձին իւր հանճարեղ գլուխների, եղել է ինքնիշխանօրէն սօն և ուղղութիւն տւողը և ընդհանուրի պահանջները լցուցանողը:

Պատմական անցեալում ահա այսպէս է եղել:

Մեր եկեղեցու պետերն ու նոցա պաշտօնեաները կենդանի յարաբերութիւն ունենալով ժողովրդի հետ, միջամտում են եկեղեցու զուտ կրօնական խնդիրների սահմաններից դուրս գտնւած հասարակական գործերում, իրանք ևս բաժանում են քաղաքական գործերը և ենթարկում իրանց անմիջական իշխանութեանը. այսպէս ազգային շարժումներն են ղեկավարում քաղաքական անկախութիւն ձեռք բերելու համար, ազդութիւնը, ժողովուրդը, եկեղեցին վերահաս վտանգից փրկելու առաջնորդ հանդիսանում, բանկցութիւնների մէջ մտնում հարեան պետութիւնների հետ, իրանց ներկայութեամբ ոգևորում հայ մարտիկներին կռուի դաշտերում և այլն, և այդ բոլորը նոքա անում են ոչ որպէս ինքնակոչ, ինքնագլուխ միջամտողներ, այլ իբրև ժողովրդի ցաւերի թարգման, նրա բերան. այդ իրաւունքները ձեռք են բերում, ստանձնում են ընտրելով ամբողջ ազգի հաճութեամբ, նոյնիսկ հարկադրանքներով:

#### IV

Հայ ժողովուրդը իւր աշխարհական և հոգևոր դասի ներկայացուցիչների միջոցով իրագործում է իւր կամքը, ընտրում է իւր ճանաչած ամենարժանաւորին

Եւ որ չափով ինքը հայ ժողովուրդը իւր մասնակցութիւնն է ունենում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան գործում, այդ չափով էլ հանդիսանում է մեր եկեղեցու տէրը, աւանդական այն ամենաբարձր ինստանցիան, որից բղխում են մեր դաւանական-կրօնական համոզումները, կարգերն ու կանոնները, եկեղեցու և հասարակութեան իրաւունքի սահմանները:

Ինչպէս ասացի, ժողովուրդը իւր կամքն է յայտնում իւր ներկայացուցիչներին միջոցով և այդ ներկայացուցչութիւնից բղխող ընտրական գործունէութիւնը գառնում է ժողովրդի այդ կամեցողութեան արդիւնքը:

Տեսնելով այդ արդիւնքը, զիտելով նրան ամեն կողմից, ընդունում ենք մօտաւոր կրիտերիում—չափ՝ հասարակութիւնը ճանչելու համար:

Հասարակութիւնը գալիս է ընտրելու իւր միջից գերազանց արժանիքներով օժտւածին. և եթէ իրականանար այդ սկզբունքը, այն ժամանակ մենք ամեն դարեշրջանում ճանաչելով համայն ազգի պետին, կարող էինք գաղափար կազմել և նրան ընտրող հասարակութեան մասին. և ընդհակառակը, ճանաչելով այսօրւայ մեր հասարակութիւնը, մենք կարող էինք որոշել թէ ո՞վ կարող է համարել մեր ժամանակի կաթուղիկուսացուն, մեր ժամանակի արժանաւորներից արժանաւորագոյնը: Մանաւանդ, որ ընտրութիւնը մենք անում ենք միայն մեր եպիսկոսաների միջից, մի փոքրիկ ցուցակից: Այդ սահմանափակումը իւր թերութեան հետ միասին ունի իւր առակելութիւնը: Մենք գործ ունենք միայն սահմանափակ, փոքրաթիւ ընտրելիների հետ, որոնց թերևս կարող ենք միշտ աչքի առաջ ունեցած լինել, հեշտութեամբ ճանաչել, որովհետև մշտապէս գտնւում են գործունէութեան յայտնի ապարելչներում. իրանց պատրաստականութեամբ, կորովով և բոլոր առաքինի ու պակասաւոր կողմերով ամենքիս յայտնի են շատ թէ քիչ: Արածը, գործածը աչքի առաջ ունենալով, վստահանում ենք նոցա ապագայ անելիքներին էլ:

Պատմութիւնը, ակներև կերպով, փառաւոր ապացոյցներ է տւել մեր այդ տեսակէտը հիմնաւորելու համար:

V.

Ա՛խ, երանի նրանց, երանի անցեալ ժամակներին... Պարծենում ենք, որ 20-րդ դարում ենք ապրում: Այդպէս էր ողջունում հայոց ազգին իւր քարոչների մէջ և հոգելոյս հայրապետ Իգմիլեանը:

Սակայն մեր գործերը, մեր կեանքը արդեօք տալիս են այնպիսի ապացոյցներ, որ մենք իրաւունք ունենայինք մեզ 20-րդ դարի արժանի գաւակներ կոչելու:

Մեր կեանքը հակառակ փաստեր, միայնգամայն ժխտող ապացոյցներ է տալիս:

Անցեալում չեն արժարժեւել կիանքի վիճելի սկզբունքները, ինչպէս այժմ. այն ժամանակ չենք ունեցել մամուլ, պայքարող կուսակցութիւններ: Սակայն այն ժամանակ մենք ունեցել ենք սկզբունքներից չճառող, կուսակցական նեղսրտութիւնից բարձր կանգնած՝ և ըստ էութեան սկզբունքով զործողների՝ եկեղեցու և ազգի շահերի զիտակցութեամբ առաջ մղւած գործունէութիւն, համերաշխ ու հաշտ գործակցութեամբ հոգևոր ու աշխարհական դասերի:

Այն ժամանակւայ մեր հովւապետներն էլ եղել են մանկանացուներ, որոնց նմանները մեր ժամանակում էլ են ապրում:

Մեր ժողովուրդը, անցեալում յաճախակի կրկնող փոթորիկների ժամանակ, ամենակրիտիկական մօմենտներն ապրելիս, ոչ մի վստահութիւն չունենալով իւր ներքին ոյժերի վրայ, չունենալով իրական սաշտպանութեան ոչ մի յենարան, չզիտակցելով ինքնագործունէութեան, ինքնասաշտպանութեան միակ և փըրկարար անհրաժեշտ միջոցը—տեսնում էր և ապաւինում միայն նրան, որին հայր էր ճանաչում, նրա մէջ տրամադիր էր գերագոյն ոյժ, զօրութիւն տեսնել:

Այսպէս էր ամբողջ կեանքը, ժամանակների ոգին մեր պատմութեան մէջ:

Եթէ գիւղը, թալանող աւազակապետի հետ գործ ունի, այդ տեղ դեր է խաղում, փրկում կամ նահատակում ամենից առաջ քահանան: Խելք ու հնարք նա կարող է բանեցնել:

Փաշայի մօտ աղերսելու գնում է առաջնորդ եպիսկոպոսը:

Սուլթանի, թագաւորների մօտ պատրիարքներն ու կաթողիկոսը, ամենակարողները: Բոլորի աչքերը վերջինիս են ուղղած:

Քաղաքական յարաբերութիւնների մէջ մտնող եկեղեցականները, եթէ գործում են ժողովրդին սիրելի յանդուգն ոգով, կամ հանդէս են գալիս ու առաջնորդում, հալածում ու աքսորում, այն ժամանակ աւելի ու աւելի մեծանում է նոցա հմայքը, կարծեցեալ ոյժը, աւելանում է ժողովրդական համակրանքը:

Թէպէտ իւր վերջին օրերն անցկացնելիս լինի նա, անգործութեան մէջ որոնելով հանգիստ ու խաղաղութիւն, փոյթ չէ, ժողովուրդն արդէն ընտրել է նորան և կանչում է նրան յանձնելու ամենապատասխանատու, ամենադժւարին գործերը: Սակայն ժողովրդի սպասելիքները ի դերև են ելնում և յոյսերը չեն արդարանում: Հետևանքները ժողովուրդը չի նախատեսում:

Այսպիսի հանգամանքներում հաւաքեող պատգամաւորները այլևս, համարեա թէ, անելիք չունին: Նոքա, կարծէք, ձևականութեան համար են գալիս. վկայում ու վաւերացնում են, արդէն նրանց հաւաքելուց առաջ փաստօրէն տեղի ունեցած ընտրութիւնը:

Ժողովուրդը իդէալ, գերմարդ է որոնում: Կաթողիկոսի անձնաւորութիւնը, որպէս իդէալ, դադարաւ,

ապրում է բոլոր ժամանակներից դուրս, անկախ: Նրան իւր բարձր արժանիքներով է ըմբռնում հայ ժողովուրդը—վեհագոյն և անաղարտ, լեցուն անսահման խելքով, գիտութեամբ, միայն նրան Աստածանից շընորհած՝ ձիրքերով: Ահա այդպիսին է ճանաչուած բոլորի հայրը, անվիճելի հեղինակութիւնը:

Մեր ժամանակում, ասացին որ չունենք իդէալական անձնաւորութիւններ և չպիտի որոնենք այդպիսիներին, որովհետև չենք գտնի: Գնանք ընտրենք մահկանացուների միջից. ասացին և ընտրեցին իրօք ամենահասարակ մահկանացուն, իդէալականի կատարեալ հակապատկերը:

Ընդհանուր ըմբռնումից, միայն գիտակցական անձաւորութիւններից դուրս, դեռ այժմ էլ և սրանից յետոյ էլ մինչև յաւիտեան, որոնում ենք և պիտի սովորենք որոնել ու գտնել այն մէկը, որը եթէ չէ երազանքը, կատարեալը, սակայն է մօտաւորը բացարձակին, լաւերից լաւագոյնը, գիտուններից ամենագիտունը:

Մեր ժամանակում ժողովուրդը դարձեալ որոնեց ամենակատարեալը և նրա հակադրոծունէութեան հետևանքը առաջ բերեց զղջման միջոցով՝ նոր, իդէալական ամենակատարեալ անձեր:

Այդ ոգով ծնունդ առաւ և դեռ ծաւալում է մասսաների մէջ այսօրւայ պատմական Օրմանեանական շարժումը:

Եւ ժամանակակից պատմական նշանտիւթիւն ունեցող, հայկական կեանքում բորբոքած հակաօրմանեանական և Օրմանեանական կուսակցական պայքարը պիտի ի վերջոյ առաջ բերի այնպիսի հետևանքներ, որպիսին կարելի է սպասել հասարակական այն հաւանական խմորումներից, որ ենթադրուած է պարզ ճշմարտութիւնների, արդար գնահատումների ամենարա-

Նախան ընդհանրացումներից: Ճշմարտութիւնը արդէն երևան է գալիս:

Եւ մենք չենք կասկածում, որ հասարակութիւնը շատ մօտ ապագայում կատարելապէս գիտակցութեան կգայ և նորից կյաղթանակի արդարութիւնը:

VI.

Պատմական կաթուղիկոսանքից շատերը արդարացրել են այդպիսի մտածումներն ու յոյսերը:

Յիշենք ոչ շատ հեռուոր անցեալի փայլուն դէմքերը, որոնք իրանց վեհափառութիւնը յաւերժացրել են երևելի մեծագործութիւններով:

Եթէ թիֆլիսի պէս մեծ քաղաքում Ներսիսեան գալրոց ենք տեսնում ձեռք ենք յիշում. էջմիածնում անտառ ենք գտնում յճի շուրջն ենք զբօսնում, դարձեալ ում ենք յիշում ակամայ, եթէ ոչ այդ բոլորը արտադրող հանճարեղ Ներսէսին:

Իսկապէս ընտրեալ մտնասարժանաւորագոյն անձն իւր ժամանակում:

«Առանց նրան էլ այդ բոլորը կլինէր», գուցէ կըճգնեն ապացուցանել անհատների գերը հասարակական պրօգրէսում ժխտողները:

Սակայն փաստն ասում է, որ Ներսէսից յետոյ, ամբողջ մի դարեջրջան գեռ չի կարողացել անել այն, ինչ արաւ նա, ստեղծեց միանգամից,

կամ մի Գեորգ Գ., որ ինչպիսի խելքով ու զոհարերութիւններով հիմնեց մեր միակ ձեմարանը, կանէր արդե՞ծ այդպէս հասարակութիւնը ինքնարեւարար:

Ահա ձեզ բիւրօկրատ իշխանաւորը. ինչ սուց մեզ զբանից յետոյ, ամենքիս պաշտած, ժողովրդավար Խրիմեանը, մեծ մարդը. անարխիա, կատարեալ

անիշխանականութիւն: Նրան ընտրեց ժողովրդական պատրանքը:

Ընթերցողը թող չկարծի, թէ ես դէմ եմ եղում ռամկավարական սկզբունքներին. ես միայն կարևոր եմ համարում շեշտել մեր ժամանակը, պայմանները, քաղաքական հանգամանքները, որոնք այդ սկզբունքների իրականացմանը քիչ հնարաւորութիւն են տալիս:

Այս հանգամանքը շեշտելու կարևորութիւնը կայանում է նրանում, որ մեր ներկայումս երկսի բաժանած մտածողները յանձին մամուլի որոշ օրդանների՝ շարունակում են, զանազան նկատումներից զբրբւած, օգտելի մեր հասարակութեան միամտութիւնից շահագործելով այդ սկզբունքը, նոքա մոլորեցնում են ու շփոթում մտքերը:

Ռուսահայերս ծանօթ լինելով առաւելապէս մեր, թիֆլիսի մամուլին, գիտենք թէ Ռալիսի վիհով է պառակտւած նա ներկայումս:

VII.

Մեր ժամանակում այդ բաժանումը, որ խիստ կըքոտութեամբ, թշնամանքով ու ատելութեամբ, լրագրական էջերից իրար հասցէին եղած, ամենօրեայ անլուր հայհոյանքներով թշնամանքով է արտայայտւում—նկատւած է իբրև մի խիստ ցաւալի, վիրաւոր երևոյթ, զեկավարող մտաւորականութեան անկման և ալլասեուման ապացոյց. մի բան, որ խոստովանում են թերթիերը՝ մէկը միւսին վերագրելով յանցանքը:

Այս կոյր ատելութեան, բաժանման իրողութիւնը զգալի կերպով հարւածում է մեր ազգային յառաջդիմութիւնը. անձնական թշնամանքը, վրիժառութեամբ մէկը միւսին տապալելու տենչը խոշոր զոհարերու-

թիւններ է անում.—նսեմանում են սկզբունքները, մեռնում է զաղափարը. միջոցների մէջ խտրութիւն չեն դնում, մէկի ասածը միւսը ժխտում, իրաւացի թէ անիրաւ վարկաբեկի աշխատում՝ ստելով ու կեղծելով:

Բարքերի այսպիսի կատարեալ ապականութեամբ ապրող մեր մամուլի դեկավորները, կեղծ հրապարակախօսութեամբ, կեղծ սկզբունքներով իրար դէմ ելած, անդադար աշխատում են մոլորեցնել մտքերը, և իրանց յետին, անձնական նպատակներին հասնելու համար շահագործում են հասարակութեան միամտութիւնը:

«Մենք յաղթենք», ասում է դոցանից իւրաքանչիւրը. իսկ հետևանքը ի՞նչ լինելու է թող լինի: Այսպէս են գոհացել և այսօրւայ առերևոյթ յաղթողները:

Նոյն այս տխուր դրութիւնը իշխում է և մեր հասարակութեան մէջ: Այժմ մեր ժամանակը, ողջ մեր կեանքն է այդպէս:

Սկսած ամենայետին, խուլ անկիւններից, դիւղերից, խարխուլ դպրոցներից, որտեղ կարելի է գտնել երկու պաշտօնակիրների, մինչև ամենախոշոր կենտրոնը, մինչև ամենաբարձր հաստատութիւնները՝ միևնոյն թշնամական (փոխադարձ) տրամադրութիւնն է իշխում:

Գիւղը թայվանների է բաժանւած՝ դպրոց են ուզում և դպրոց չեն ուզում: Չրի դպրոց էք տալիս, էլի չեն ուզում:

Գիւղը դպրոց ուզում է և ունի, բայց վարժուհի են ուզում և վարժուհի չեն ուզում, դպրոցի մէջը եկեղեցականութիւն (խալիֆայական դպրոց) են ուզում և ընդհակառակը, և այլն: Այս դեռ մենակ գիւղը և մենակ այդքանը հօ չի. ո՞րն ասես. թւելով կը վերջանայ...

Նոյն թայվանական բաժանումը տեսնում ենք մամուլի մէջ, միևնոյնը էջմիածնում՝ միաբանութեան մէջ: Ի՞նչ են ուզում: Տիրապետութիւն, պաշտօն,

փող... չէ՞ որ այդ բոլորը համեմաշխութեամբ, եղբայրութեամբ ու համագործակցութեամբ էլ կարելի է ձեռք բերել:


Եթէ որ համեմաշխութեամբ ու միութեամբ ներդաշնակութիւն կըմտնէր մեր ամբողջ հասարակական կեանքում, իւրաքանչիւրը կը լինէր իւր տեղում; իւր դերի ու դիրքի մէջ՝ իւր համապատասխան կոչման բարձրութեան վրայ—սպազորական խօսքը իւր անարատութեամբ ու մաքրութեամբ կըհնչէր այսօր, դրուոցներն իրանց միատեսակ ծրագրերով ու կազմակերպութեամբ, եթէ պառակտւածները գործէին միաբանութեամբ միշտ յառաջադիմութեան, լաւի, օգտակարի, մաքուրի գիտակցութեամբ,—այն ժամանակ կանգնած կըլինէինք այն ճանապարհի վրայ, որ մեր նախնիք են զծել մեզ համար, որ այժմեան լուսաւորութիւնն ու քաղաքակրթութիւնն է ցոյց տալիս մեզ և որով միայն կարող էինք մօտենալ վայելելու 20-րդ դարու քաղաքակրթութեան պտուղները՝ սեփականելով այն: Նւ միայն այն ժամանակ իրաւացի կըլինէր մեզ այդ դարու զաւակներ կոչելը և այդպիսի ողջոյնի արժանացնելը:

Այն ժամանակ մենք կապրէինք ձգտելով դէպի իդէալը, փայլալուստի միութիւնն ու ամբողջութիւնը, իրականացրած կ' լինէինք ամենամեծ սկզբունքը:

Մենք խօսում ենք և ասպացուցում սկզբունքներով, սակայն գործում ենք և կատարում հակառակը:

Ի՞նչ ենք տեսնում այդ բոլորի դիմաց. մեր բերօկրատ կաթողիկոսները հիմնեցին ձեմարան, Ներսիսեան դպրոց. շինեցին լիճ, անտառ և այլն: Նոքա ստեղծել են, հիմնել այդ բոլորը և աւանդ են թողել մեզ:

Իւրաքանչիւր ազգ, երբ իւր փառաւոր ժամանակնե-



բում, զարգացման շրջանում է ապրում, սկսում է ստեղծագործել, արտադրել: Իսկ երբ լաւ ժամանակները տեղի են տալիս անկման ու քայքայման, այն ժամանակ ստեղծագործութիւնը կանգ է առնում և ապրում է անցեալը՝ հազիւ հազ և պահպանւում է աւանդութիւնը: Մենք էլ այժմ բան չենք աւելացնում. մեր սեփականութիւնն էլ միայն նախնեաց աւանդն է: Դժբախտութիւնը նրանումն է, որ եղածն էլ, մեր ժառանգութիւնն էլ պահպանել չենք կարողանում, ո՞ւր մնաց աւելացնելը, վերաստեղծելն ու զարգացնելը: Նմանեւն էլ չի յաջողւում մեզ:

VIII

Տակաւին յիշողութեանս մէջ թարմ է, յանդուցեալ Իգմիլեանի յանդիմանական ճառը շեմարանի շեմքում բացւած, Գէորգեան տօնին, բացօդեայ հանդէսի ժամանակ:

Շատ անգամ բազդ էի ունեցել լսելու նրա ճառերը: Գիտէի էլ, որ նա վրդովում էր իւր վրայ կրկնուող յարձակումների պատճառով. նախորդ ճառերում հրապարակով, մինչև այդ օրը և ոչ մի ակնարկ չէր թող տւել այդ մասին:

Սակայն այլ կերպ հանդէս եկաւ նա այս անգամ: Հազիւ երկու ամիս մահւանից առաջ էր. երևում էր, լցւած էր համբերութեան բաժակը:

Միանգամից, յանպատրաստիցս, այնքան ազդու և հիմնաւոր կերպով «երիտասուրդ գիտնական ուսուցչի» և տեսչի ճառերը քննադատելուց յետոյ, նա բացականչեց. «Գէորդ կաթողիկոսին գերեզմանէն կուգան ձայները, տակաւին 36 տարի է անցած և դեռ շատ քիչ բան է արւած»: Ապա անցնելով ներկայ պա-

րագաներին որքան ուժեղ հանդիմանեց նա հասարակութեանը, հոգևորականութեանը, որոնք ոչ մի աջակցութիւն ցոյց չտալով՝ մի անգամից պահանջում են շատ բան, համարեա ամեն բան իրանից ու էջմիածնից:

Նա զգում էր, որ իւր տեսած էջմիածինը միանգամից չէր կարող անել շատ բան. նա տեսնում էր որ պակասում են ոյժերը: Սակայն նա չգիտէր երևի այն ոյժերի մասին, որոնք ընդունակ էին, ոչ քիչ բան անելու և որոնք հեռացւած էին նրանից, բացակայ էին:

Հանդուցեալի միամեայ կաթողիկոսութեան շրջանում իմացանք միայն որ նա զանազան «խելօք» մարդկանցից կազմում էր յանձնաժողովներ և ժողովրդական դպրոցների համար ծրագիր ու կանոնադրութիւն էր մշակել տալիս:

Ասում են, որ նա ցանկացել է և կարևոր համարել այդ ուղղութեամբ մշակելով պատրաստել թեմական դպրոցների ու ճեմարանի ընհանուր ծրագրերը:

Դա բղխում է մեր դպրոցների արդի անկազմակերպ, անորոշ վիճակից, ամենայժամէական կարիքներից:

IX

Չունեն մեր դպրոցները ընդհ. ծրագիր, ուղղութիւն:

Մենք ցաւում ենք և աղաղակ բարձրացնում, որ մեր թեմական դպրոցները չեն ճանաչւում կառավարութեան կողմից իբրև միջնակարգ դպրոցներ և չեն վայելում միջնակարգ դպրոցների արտօնութիւնները. չեն ընդունում թեմականաւարտներին ու ճեմարանաւարտներին համալսարաններում ու բարձրագոյն դրոյթոցներում, մինչդեռ մեր թեմականներն ու ճեմարանը

և Ներսիսեան դպրոցը մէկը միւսին չեն ճանաչում հաւասար իրաւունքներով: Ներսիսեան դպրոցի աշակերտը առանց քննութեան, չի ընդունուում ճեմարանի և թեմական դպրոցների համապատասխան դասարանը:

Վկայականը ձեռքին թեմական Ներսիսեանաւարանները չեն ընդունուում մեր ճեմարանի մասնագիտական բաժնում, մինչև որ չեն քննութիւն տալիս որոշ առարկաներից:

Այդպիսի մի հեղհեղուկ դրութեան պատճառը անկանոնութիւնը, ծրագրային անհամերաշխութիւնը և ընդհանուր կարգ ու կանոնի բացակայութիւնն է դպրոցների կեանքում. դրա համար կամայականութիւնն ու վարիչների ինքնազլխութիւնը անսահման է մեր դպրոցներում: Մօտենանք հէնց էջմիածնի քթի տակ իւր գոյութիւնը քաջ ուռող, այսպէս կոչւած բարձրագոյն դպրոցին— ճեմարանին:

Ո՞ւմ յայտնի չէ, թէ ո՞ր աստիճանի խաղալիք դարձան կարգերն ու կանոնները 1905 թւականից սկսած, տարէց տարի իրար փոխարինող տեսուչների օրերում:

Մէկը պահպանում է գոյութիւն ունեցող, սահմանեալ կարգերը, միւսը զալիս է հիմնայատակ է աւնում, քանդում, շուռ է տալիս բոլորը, վերացնում է մինչև անգամ տօն ու կիրակի օրերը աշակերտներին եկեղեցի տանելու սովորութիւնը...

Նրա յաջորդը, մի տարի յետոյ վերանորոգում է նախկին կարգերի որոշ մասը, մտցնում նորերը և այդպէս շարունակաբար:

Այդ նոյնը, պիտի ասել և հեղհեղուկ ծրագրային խնդիրները մասին. առարկաները մտնում են, առարկաները չքանում ըստ հաճութեան, քէֆի համար: Հեռացում են վարիչի անհամակիր, թէկուզ պատրաս-

տի ուսուցիչները, հրաւիրուում են նրա բարեկամները, երբեմն ապիկարները:

Նոյն այդ խախուտ վիճակը և միւս մեր միջնակարգ դպրոցներում: Ահա այս ասպարէզում, ուր «ամենայն ինչ խառն ի խուռն է, ոչ առաջինք են յայտնի և ոչ յետինք» համերաշխութիւն և կարգ պիտի մտցնի ասպազայ կաթողիկոսը: Սակայն միայն այդքանը չէ:

Աւելացրէք և այն, որ նորի նորոյ, զանազան կտակներով և նպատակներով, մասնագիտական դպրոցներ են հիմնուում: Այդ դեռ հազիւ սաղմնային դրութեան մէջ է. այդ ուղղութեամբ էլ սպասելիքներ ունենք ասպազայ կաթողիկոսից: Նա պիտի ընթացք տայ այդ դպրոցների կազմակերպութեան գործին:

Սակայն ամենից առաջ մեր միջնակարգ դպրոցների և ճեմարանի բարեկարգութեան խնդիրներն են հերթի դրւած:

Աւելացրէք և այն, որ ոչինչ չի աւանդուում մեր միջ. դպրոցներում հիմնական ու համապատասխան որոշ ծրագրի, ուղղութեան: Ճեմարանի մասնագիտական բաժնում չէք գտնի ոչինչ այդ անւանը համապատասխանող: Մեր նոր սերունդը չ'դաստիարակելով որոշ ողով, կարգ ու կանոնի տակ մինչև դասնթացն աւարտելը, դուրս է զալիս անկորրեկտ անվայելուչ, մեծամիտ ու կւււրբար, վիճող, ինչպէս խօսուեն թութակներ:

Ահա ձեզ ճշմարտութիւնը. տեսէք թէ ի՞նչ հիմնեցին ժողովրդից մի բան հարցնելու հնարաւորութիւն չունեցող մեր բիւրօկրատ կաթողիկոսները, ի՞նչ անււացրին նոցանից յետոյ ժողովրդավարները, իրանց շրջապատող գիտուն խորհրդականների միջոցով: Այս բոլորը այնքան յայտնի, բազմաթիւ անգամ կրկնւած է, որ արեգակի լոյսի պէս պարզ է թէ մեր հասարակութեան գիտակից մասին և թէ էջմիածին եկած պատ-

գամաւորներին. հասկացան սոքա խնջի համար և հր-  
պիսի կաթուղիկոս պարտաւոր էին ընարել...:

X.

Բոլոր այս գործերը ուղղակի թէ անուղղակի են-  
թակայ են էջմիածնի հոգացողութեանը, նրա խնամքին  
են կարօտ:

Որպէսզի այդ բոլոր հաստատութիւնները իրանց  
կոչման բարձրութեան վրայ կանգնեն, որպէսզի գոքա  
քաղաքակրթեն հայ հասարակութիւնը, որպէսզի գոնէ  
չպակասի... զարգացումը կանգ չառնի, չքարանայ... Հայ  
դպրոցը սնւելով Եւրոպ. քաղաքակրթութեան նորանոր  
նւաճումներէից, գրան պիտի շողկապի հայկական մի-  
ջավայրը, կեանքը, ամենալայն մտքով, ծնելու համար  
քսաներորդ դարի հայ քաղաքակրթութիւն. այդ բոլորը  
միայն և միայն այն ժամանակ կարող է մօտենալ  
իշականութեանը, երբ հասարակութեան այն ոյժերը  
որոնք առաջ են մղելու ընդհանուր, մեծ գործը, բացի ո-  
նալ կերպով ղեկավարեն մեր միակ կենտրոնից:

Իսկ այդ կենդրոնը այնպիսի բարձրութեան վրայ  
պիտի կանգնած լինի, պատկառանք ազդի, որին ակա-  
մայ հեղինակութիւն ճանաչեն բոլորը. իսկ պատկա-  
ռանքը, հեղինակութիւնն ու հմայքը կարող է ստեղծել  
իսկական և ոչ ներկայ՝ անմիաբան միաբանութիւնը:  
Միայն բոլոր միաբաններէից բաձր կանգնած կաթողի-  
կոսը, գիտուն ու կարող միաբանութեան աջակցու-  
թեամբ, կարող է կառավարել թէ էջմիածինը և թէ  
մեր բոլոր կրթական հաստատութիւնները:

Եւ խնջպէս պիտի իրականանայ այդ:

Մեր դպրոցական այլ և այլ հաստատութիւնների  
փոխադարձ կապերով յարաբերութիւն ունենալը էջ-  
միածնի հետ իրողութիւն է, մի ցանկալի անհրաժեշ-

տութիւն և թւում է թէ, աւելորդ է ջանք դործադրելը  
այդպիսի մի ճշմարտութիւն ապացուցանլու համար:

Այնուամենայնիւ կան տարբեր մտածողներ էլ,  
որոնք թւով ու դիրքով մի իրական ոյժ են ներկայաց-  
նում մեր հասարակութեան մէջ, և խիստ ֆլասակար  
ագդեցութիւն անում, թուլացնում են միացման այդ  
անհրաժեշտ կապը:

Նոքա ասում են՝ «դպրոցը դպրոցի համար, դըպ-  
րոցը ժողովրդի համար» «խնջ հաշիւ ունի դպրոցը  
եկեղեցու հետ, խնջ գործ ունի կրօնը դպրոցում» ևն.  
այդ բոլորը թիւր և շփոթ հասկացողութիւններ են,  
չարժէ աւելի կանգ առնել. յիշեցնենք որ նախ և առաջ  
դա չի բղխում հէնց իրա, ժողովրդի հոգեբանութիւնից,  
կրկորդ անթոյլադրելի ու անիրականալի է տիրող  
իրաւակարգում. և երրորդ՝ որ առաջին կէտից է  
հետևում, իսկական սրբագործւած սկզբունքը՝ եկեղե-  
ցին ժողովրդի համար և ժողովուրդը եկեղեցու հա-  
մար, վերջի վերջոյ աչքի առաջ ունեն հասարակա-  
կան շահը, զգուտը. փաստապէս եկեղեցին ղեկավարում  
է իսկ հասարակութիւնը ենթարկում. սակայն մեր  
դպրոցական կեանքը ցոյց է տալիս որ այդ երկու գոր-  
ծօնները մշտական հաւասարաչափ փոխադեցութեան  
մէջ են, որովհետև դոցանից իւրաքանչիւրի թուլու-  
թիւնը, հիւանդոտ վիճակը տեսնում ենք, որ անմիջա-  
պէս անդրադառնում է մեր դպրոցների կեանքում, նո-  
ցա կազմակերպութեան և ներքին ոգու վրայ, առաջ  
բերելով ընդհ. հոգեկան թուլութիւն և խառն անկարգ  
մի վիճակ: Հասարակութիւն է եկեղեցի, դոքա պիտի  
գործեն համերաշխ: Մէկի դիրքը, օրինական ոյժը պի-  
տի միանայ միւսի իրական ենթարկեալ ոյժին:

Այս բոլորից յետոյ որոշ չափով պարզ է թէ ո՞վ  
է լինելու ապագայ կաթողիկոսը և խնջ է լինելու նրա

անելիքը: Այդ բոլորին եթէ կցենք և մեր միջնակարգ ու տարրական դպրոցների տնտեսական ապահովութեան խնդիրը, ամուր ու կազմակերպւած հիմքերի վրայ նոցա դնելու համար, վանքական կալւածների մշակման, վանքի ֆինանսների կանոնաւորման և այլ եկեղեցու ու նրան ենթակայ հաստատութիւնների բարեկարգութեան հոգսերը, և քաղաքական բարդ հանգամանքները՝ այն ժամանակ մենք կարող ենք ստել իրօք թէ ճրպիսի արժանիքները կարող են գրաւական լինել, շանսեր համարել եպիսկոպոսներից մէկին հայրապետական դահին բաղմեցնելու համար:

Այս ամենը աչքի առաջ ունենալուց յետոյ, մնում է ստել թէ այսօր մեր եպիսկոպոսներից ճիշտ էր լինելու Ամենայն Հայոց Կաթողիկոսը, համայն ազգի կամեցողութեան հետեանքը և այդ կամքն իրագործողը:

XI

Վերսիշեալ կարգի մտածողները որոնում են եպիսկոպոսների մէջ իրանց կուսակիցը, որ սակայն չեն գտնում:

Զարմանալի կերպով մտածում և տարօրինակ կերպով գործում են այդ մարդիկը: Նոց անից շատերը ժխտում են եկեղեցի, կաթողիկոս, թշնամի են ամբողջ հոգևորականութեան:

Նոցա մի անորոշ մասը չի բաժանում այդ մըտքերը: Սոքա խրատում են իրանց ծայրայեղ մտածող ընկերներին, ցոյց են տալիս, որ եթէ էջմիածնի կաթողիկոսը չլինի իրանց մարդը, իրանց տիրապետութիւնը կ'վտանգւի դպրոցներում, իրանց նպատակները չեն իրագործւի: Եւ չ'շերտաւորւած, խառը ազատամիտների բանակը վերջին տարիները հայկական

կեանքը ղեկավարում էր, հարթելով իւր ներսում դուռթիւն ունեցող մտքերի խորը հակասութիւնները և դրանից առաջացող տարաձայնութիւնները. նա յենեց ամբոխային ոյժերի վրայ և տակն ու վրայ արեց մեր ամբողջ կեանքը: Այս խուժանային շարժումը, որին գոհ գնացին նախ և առաջ Ռուսահայոց կուլտուրական կեանքը, կրթական հաստատութիւնները, և դոցա բարեգարգութեան համար տառապած, դոցա վտանգի օրերում պաշտպանող հերոսները. նոյն այդ շարժումը յանկարծ բռնկեց Վոսիորի ափերում, երբ միանգամից տեղի ունեցաւ քաղաքական յեղաշրջումը, երբ յանկարծ լուծեցին կապանքները:

Սեղուած, ազատութեան յոյսը ընդմիշտ կորցրած ժողովուրդը՝ շփոթեց, յանկարծակիի եկաւ, երբ վշըրեցին շղթաները, և իրան կորցրած, հարբածի ինքնամոռացութեամբ, ազատութիւնը իբր անիշխանական սանձարձակութիւն համարելով՝ հետեւեց իւր սանձարցակ առաջնորդներին և բարձրացաւ վրէժ լուծելու խոհեմութեան, նրբամիտ դիւանագիտութեան և դիւցիպլինի դէմ:

Քող կորչի դիւանագիտութիւնը! հեռատեսութեան քարոզը... Եւ անարդեցին նրան, որ այդ բոլորի մարմնացումն էր, ու բարձրացրին Երեսողէմի երկրորդ աքտորականին, նրան որ զուրկ էր այդ բոլորից և այդ բոլորին հակառակ՝ յանդուգն էր, անհեռատես, բաց արհամարհող բռնաւորին. արհամարհանք, որի հատուցումը եղաւ 300,000 անմեղների արիւնը:

Յիմար ամբոխ...

Տաճկաստանում և Կովկասում, դեռ այն ժամանակ, երբ վայրագօրէն քաշկուտում էր հանրածանօթ, այդ նշանաւոր եկեղեցականը, հնչեցին ձայներ՝ թէ «անարդար էր»: Սակայն այդ ձայները այն ժամանակ

խրացան ամբոխի «ի խաչ հանէք զդս» աղաղակների մէջ:

Եւ տասներկուամեայ Երուսաղէմի բ-բդ արքայապետը բարձրացաւ Լուսաւորչի աթոռը: Ինչպէս ա-ին արքայական թրիմեանից, այնպէս էլ բ-ից՝ Իզմիրլեանից հիասթափուեց նոցա պատրիարքութեան ենթակայ ուսանայ ժողովուրդը: Այս անգամ և վերջին անգամ նա զգաց, որ իւր կարիքները ըմբռնելու և հոգալու ընդունակ չեն Աուրթանի կողմից՝ անգոր մրցակիցները. նա գնահատեց այդ մրցութեան արժէքը, իմացաւ նրա դժբախտ հետեանքները:

Տաճկահայոց թշուառութեանը կարեկից, նրա դժբաղդութիւնների ժամանակ նրա ցաւերով տանջող ուսանայ ժողովուրդը, Իզմիրլեանից յետոյ պահանջեց և փոխադարձ վերաբերմունք սպասեց թիւրքահայերից:

Իզմիրլեանի մահանից յետոյ սառը, առողջ մըտքի պահանջը այս էր. ուսանայ հոգևորականներից ամենաարժանաւորին ընտրել ուսանայոց պատրիարքին: Գլխաւոր, որ նա պիտի և Ամենայն Հայոց Կաթողիկոս համարւի. Տաճկաստանից էլ սէսեցին ձայնակցել համաձայնութեամբ: Որքան էլ որ տրամադրւած էին ընդունելու սկզբում, որ հեշինակութիւնները չկան այլևս և այդ հանգամանքը զժրագրութիւն չհամարելով՝ ասում էին «ընտրելու ենք ոչ թէ արածի համար, վարձատրութեան նման, այլ անելիքի համար»: Սակայն այդ թերի սկզբունքը չկարողացաւ գերիշխող դառնալ, որովհետև «անելիքի համար կարելի էր երաշխաւորել, միայն արածներն աչքի առաջ ունենալով»:

Եւ երբ կրկին իբրև հեղինակաւոր անձն, մի կողմից կամայ թէ ակամայ, ընտրելի հրատարակեցին Նդիշէ արք. Դուրեանին, այն ժամանակ նրա ուսուցչից հիասթափուած, նրա նսեմացած վարչակառութեանը

և պատրաստակառութեան դիմաց բարձրացրին հանրաժանութ ամենահզօր, անհատական կարողութիւններով և ընդունակութիւններով ամենաբարձր Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանին:

Եւ մեծացաւ Օրմանեանը Ռուսաստանում, և ծաւալեց ժամանակակից Օրմանեանական շարժումը: Ամենամեծ մարդիկ ունին ամենաշատ թշնամիներ. իրաւ է: Եւ Օրմանեան արքեպիսկոպոսի ոյժը, նրա գիտական պատրաստակառութիւնը (աւարտել է 3 ֆակուլտէտ), նրա դիւանագիտական հմտութիւնը և այլ ձիրքերը չեն ուրանում նրա այն հակառակորդները, որոնք հարկադրւած են զգում իրանց պատասխանելու Օրմանեանականներին: Նոքա ոչ մի լուրջ պատճառաբանութեամբ չկարողանալով մերժել Օրմանեանին, բերում են նրա դէմ այնպիսի առարկութիւններ, որոնք ամբողջային տրամաբանութեան արդիւնք են, ամբողջային թշնամական տրամադրութեան հետեանք:

Նոքա ասում են.

— Օրմանեանը կաթողիկոսութիւն կ'մտցնի մեր մէջ, որովհետև նա կաթողիկ ծնողների գաւակ է, կաթողիկ դպրոցում կրթւած:— Օրմանեանը Համիդի մտերիմը, նրա գործակիցը, հայկազական շարժեր կազմակերպողն է:

— Օրմանեանը ժողովրդից ատուած է, նա չկարողացաւ պատրիարք դառնալ, չի կարող ուրեմն և կաթողիկոս ընտրել:

Այս և սրանց նման մեղադրանքներ, որոնք անմիտ են և հակասում են ճշմարտութեանը: Ռուսահայ թերթերի մեծ մասը ցոյց տւին այդ մեղադրանքերի արժէքը: Նա ապացոյց բերեց նախկին պատրիարքի տասներկուամեայ գործունէութիւնը, բոլոր արժանիքներով, ըստ որում նա ժամանակին նախկին պատ-

բիւրքները բիրտ դիւանագիտական յարաբերութիւններից տուժած և խրատուած ազգի կողմից նախապէս գնահատուելով՝ իրան վայել պատրիարքական պաշտօնն ստանձնեց:

XII

Պատմութեան մէջ, յայտնի է, որ միքանի անգամ է Պօլսական ամբօխը խուժել պատրիարքարան: Այդ շատախօս, դիւրագրգիռ ժողովուրդը ընդունակ է անպէտք մարդկանց բառերի տարափով մինչև երկինք բարձրացնել, սովոր է և յաճախ՝ մեծ ու պիտանի մարդկանց անյատակ անդունդը գլորել:

Օրմանեանին այլևս պատրիարք չնտրեցին. դուրեանականները եզրակացնում էին, որ կաթողիկոսացման իրաւունքը զբանով կորցնում է Օրմանեանը: Սակայն այդ փաստաբանները հակասութեան մէջ ընկան, քանի որ նոցա կլիենան էլ այլևս չ'նտրեց պատրիարք, մինչդեռ իրանք շարունակեցին պնդել նորա անպայման կաթողիկոսացումը: Պօլսի հոսհոսները երբէք չեն կարող համայն հայութեան, նոյնիակ տաճկաց հայերի հոգեկան կարողութեան մասշտաբ համարելի:

Օրմանեանի դէմ լուրջ առարկութիւնը այն էր, որ բոլոր արժանիքներով հանդերձ, նա ատոււմ էր ժողովրդից, որով իրան, նա կորցրեց իւր կաթողիկոսացման թէ՛ իրաւունքը և թէ՛ հնարաւորութիւնը, նախորդ ընտրութեան ժամանակ. այդ ատելութեան թոյնով Պօլիսը վարակեց հայութիւնը: Պօլսի խուժանը, որ իւր պատմական սովորութեան համաձայն, յարձակեց Օրմանեանի վրայ, և խուժանապետները, որոնք մայրաքաղաքի հայութեան այդ արատը դուրս եկան պաշտպանելու, — հռչակեցին սրբ. Օրմանեանին ազգի

դաւաճան, մատնիչ, կաշառակեր, ազգային փողեր իւրացնող... Այս ծանր յանցանքների մէջ մեղադրելով նրան դատի ենթարկեցին, և մթութեան մէջ, ժողովրդի աչքերից ծածկեցին իսկական Օրմանեանին:

Երկու ձիւ տարիներ ամբաստանեալ պատրիարքը մնաց դատի տակ և հազիւ հազ, երէի ազդած ուստահայ ժողովրդի բողոքներից, սեղաւած Ազգային ժողովին, մի փոքր ընթանցք տւին նրա գործին: Եւ Օրմանեանը իրա անձնական թշնամի դատաւորներին անգամ հարկադրեց ընդունելու, որ մեղադրականակալը ամբողջովին կեղծ է, որ նա ոչ միայն ազգային գումարներ չի իւրացրել, այլ ընդհակառակը պատրիարքարանը 700 ոսկի նրան պարտք է մնացել և այլն:


Այս և սրանից առաջ նրա նշանաւոր հայ եկեղեցու պատմութեան գիտական աշխատութեամբ հանդէս գալը, միանգամայն մաքրեց ու բարձրացրեց գիտակից դասակարգի նշանաւոր մասի և ժողովրդական մասսաների առաջ սրբ. Օրմանեանին: Եւ ատուող ու ոտնահարւող մարդը սկսեց սիրել մեծարւել միեւնոյն ատողներից: Լուսեց ճշմարտութեան ձայնը բարձր, ուժեղ և արդարութիւնը նորից յաղթանակեց:

Մտքերի բէակցիան ուղեցին բացաւրել քաղաքական հանգամանքներով, նոր և անսպասելի շարժումը՝ համարեցին կղերական, յետադիմական. դատապարտեցին Թիֆլիսի վաճառականութեանը և այլն:

Եւ տիրապետող ու ձայներ խլացնող հակաօրմանեանական հոսանքը թուլացաւ. նոսրացան նրա շարքերը, նա զգաց իրան թոյլ և սկար: Թոյլ թէ թւական ոյժով և թէ բարոյական արժէքով — սկզբունքային խառնաշփոթութեամբ, անդաւանանք, անսկզբունք՝ կոյր կատարութեամբ նոքա գոչում են՝ — չենք ուզում լսել այդ սնունը. նա ատելի է...

Մակայն այս բանակի խոշոր մասը, և նոցա ջոջերը լաւ ճանաչում են ս. Օրմանեանին, և դիրք ու անձնական շահեր աչքի առաջ ունենալով շոյում են խուժանին: Այսպէս թէ այնպէս հրապարակի վրայ է և հակաօրմանեանական բանակը, որի գոյութիւնը «արջք օրհասականք»-ն է յիշեցնում: Եթէ համեմատենք իրար հետ այդ երկու պայքարող կողմերը, կընկատենք մի բան. ամբողջ շարժման, ընդհարման պատճառը Օրմանեանի անձնաւորութիւնն է. թէ նրան քարձրացնելու և թէ միևնոյն վիճակում պահելով խորտակելու հակադիր մրցումը սրել է և առիթը ներկայ կաթողիկոսական ընտրութիւնն է. իսկ այդ բոլորը հետեանք է հասարակական ինքնագիտակցութեան արթնանալուն:

Մի ակնարկ էլ մամուլի վրայ ձգելուց յետոյ, կ'ըբարձրացնենք վարագոյրը, որ ծածկում է մեծամասնական հակաօրմանեանական բանակը:



Բ. գլուխ

Մամուլը և ներկայ կաթող. ընտր. խնդիրը

(Համառօտ ակնարկ)

I

Մեր կաթողիկոսացուն, դեռ տեղակալի պաշտօնում խաղալիք է դառել մի քանի վարդապետների ձեռքին. ուստի վերջինների ջանքերով ու խարդաւանքով էլ յաջողեց նրա ընտրութիւնը:

«Հորիզոնը», որ ճգնեց՝ Օրմանեանին տապալող մեծամասնութեան իսկական արտայայտիչը հանդիսանալ, այս հանգամանքը գողարիկ կերպով առաջ է բերում, սեփական թղթակցի գրչով հրապարակում է իւր փառաբանած մեծամասնութեան կեղծ միութեան մեղադրական ակտը № 279-ում գրելով «Գէորգ արք. Սուրենեանինը տւաւ 58 սպիտակ և 30 սև»:

«Երկրորդ քւէատուփը, անսպասելի կերպով առաջ բերաւ երկու ճնշող փաստեր: Առաջինն այն էր, որ էջմիածնի միաբանութեան ընտրող, քւէ տւող անդամներն անգամ, սև քւէ տւին Եղիշէ արք. Դուրեանին: Դա անսպասելի էր մանաւանդ այն պատճառով, որ եւրէկ երեկոյ այդ իսկ հայր սուրբ և սրբազանները ամենից աւելի էին պնդում, թէ իրենց առաջին թեկնածուն Դուրեանն է լինելու»:

Այսպիսով «Հորիզոնը» անգամ կաթող. ընտրութեան հարցում երևան է հանում մեծամասնական «հայր սուրբ, սրբազանների» յետին, անձնական հաշիւներով տար-

ւած լինելու ամենաճշող փաստը. այնուհետև այդ թերթը այլ ևս չուզեց մերկացնել իսկական «Հորիզոնական» մեծամասնականներին:

Հէնց ինքը, թղթակիցը այդ տեղ շտապում է մեղմել իւր մեղադրանքը, և մխիթարում է շարժանակելով— «Եւ յիրաւի, Դուրեանը ստացաւ Սուրէնեանից միայն մէկ քէպակաս (ընդզծ. հեղինակինն է) և այն՝ միմիայն էջմիածնի միաբանների ո՛չ այնքան շիտակ (ընդզծումը մերն է) վարմունքի համար»:

Ոչ այնքան շիտակ են վարել, որովհետև չի ընտրւել Դուրեանը, ընտրել է Սուրէնեանը: Սակայն մենք տեսանք «Հոր»-ի աւելի առաջւայ Ա՞ Ա՞ ում այդ միանգամայն շիտակ միաբաններին: Այն ժամանակ դոքա քաջեր էին, որովհետև գաղտնի քէպակասներ միաձայն մերփեցին Օրմանեանին. էլ ի՞նչ կասկած միաձայն մեծամասնութեան, համոզմունքով առաջ եկած միութեան մասին<sup>1)</sup>:

Նոյն փորձնական քէպակասները ունեցաւ Դուրեանի միաձայնութեամբ ընտրելու, նոցա համար ամենափառաւոր հետևանքը: Փաստը եկաւ յեղաշրջեց. սակայն «Հորիզոնը» շարունակեց միևնոյնը:

2<sup>o</sup> որ այդ ոչ շիտակ մարդկանց վրայ յինելով «Հորիզոնը» մոռացաւ դոցա կեղծիքով և զօտով ընտրած Սուրէնեանին, ամենևին չյիշեց վերջինիս և չըզատապարտեց:

Սակայն գողութեամբ կատարւած այդ գործի մէջ, ծանր կասկածներ ընկան և «Հորիզոնի» վրայ և երևի

<sup>1)</sup> Մինչ դեռ յայտնի է, որ այդ ժողովից, բացի 32 ձայնով Օրմանեանականներից, բացակայ էին 30 առերես մեծամասնականներ էլ, որոնք եթէ ժողովում լինէին թերևս գաղտնի քէպակասները այլ հետևանք ունենար:

այդ բոլորն ուղիղ էր, քանի որ այդ թերթը այնպէս պայանձուեց, որ միանգամ էլ չյիշեց այդ յանցանքի մէջ թաթախւած քառանուն ցանկի, նրա համար դ-րդ անդամին, (իմն Սուրէնեանին):

Սակայն Բագրատ, Մատթէոս վարդապետների և Սուրադրէզեան եպիսկոպոսի (անշուշտ «Հոր»-ի թղթակցի «հայր-սուրբ և սրբազաններ» խօսքը հէնց սըրանց է վերաբերում), նման բարեկամների մտերմուպիւնը էփան չ'նստեց Հորիզոնին, վերջինս կորցրեց իւր իսկական ընտրելիներին, որոնց կողմն էր մեծամասնական բանակի ձայների ճշող մեծամասնութիւնը, այդ մենք կապացուցենք յետագայ գլուխներում:

Փաստը այն է որ Հորիզոնը միացել, ընկերացել էր գող մարդկանց հետ. իսկ սոքա այդ նշանաւոր օրերում յայտնի ժողովրդական առածի պէս զգալ տւին «Հորիզոնին» «գողը գողից գողացաւ»-ը: Այնուամենայնիւ Հորիզոնը գոհ է, չէ՞ որ մեր բան էլ նա յաջողեց գողանալ: Բայց գոհութիւն արտայայտելու պատճառն այլ է:

Ի՞նչպէս գոհ չ'մնալ, չէ՞ որ գաղտնի պիտի պահել քողի տակ ներքին շատ մութը հաշիւներ. ի՞նչու առել թէ իրանց ուղածը չընտրեց, չէ՞ որ այդ կ'վերաւորի Սուրէնեանին, իսկ այսուհետև էլ նոքա ևս օգտելու յոյսեր ունեն. նոցա համար էլ կարող է ձեռնտու լինել Սուրէնեանը, նոցա մարդկանց կամքն էլ կ'կատարի... պաշտօն կ'ստանան...

Ընտրութիւնը բաւարար համարելով, կպտարւած փաստի հետ հաշտելով (Ա՞ 277) «Հորիզոնը» մխիթարում է նրանով, որ իւր թեկնածուներից առաջինը միայն մի ձայն է պակաս ստացել, իսկ երկրորդին երրորդ տեղն է յատկացել, մի աստիճանաբար երուրթին: Երևի միևնոյն Ա՞-ում տպւած թղթակ-

ցութիւնից ազգելով «Հոր.»-ը № 279 առաջնորդողում գրում է «... մեղաւորները մասամբ թիւրքահայ ժողովուրդն էր: Ինչո՞ւ բոլոր թեմերը պատգամաւորներ չընտրեցին իրանց միջից և չուղարկեցին անձամբ քուէարկութիւն կատարելու» (Չէ՞ որ այդ դէպքում անպայման Դուրեհանը կընտրուէր և ոչ Սուրէնեանը):

Իւր նեւեհըն ուղղելով Օրմանեանականների հասցէին, որոնց մեծ մասը նոյնպէս Տաճկահայ թեմերն են ընտրել, շարունակութեան մէջ թերթը հասկացնում է լուսիւսին, որ «բաւարար ընտրութեան» (№ 277) հետեւանքից ինքը գոհ չէ. «Հորիզոնը» շարունակում է. «Այս հանգամանքը մենք առաջ ենք բերում ամենեւին ոչ այն նպատակով, որ յանդիմանած լինենք թիւրքահայ ժողովուրդը: Ո՛չ: Մենք շատ լաւ գիտենք որ անշնորհք գլուխը միայն անշնորհքութիւն կարող է մշտցնել հասարակական կարգերի մէջ: Մանկունի եպիսկոպոսը... խրախուսեց... որ ժողովուրդը փող չ'ծախսելու համար, Ռուսաստանից ընտրէ իր պատգամաւորներին»:

«Հորիզոն»ը այստեղ կեղծում է. յայտնի է, որ Մանկունին ոչ թէ փող չ'ծախսելու համար է առաջարկել ռուսահայերից պատգամաւորներ ընտրելու, այլ բացառապէս Սուրէնեանի ընտրութիւնը յաջողեցնելու համար, նա ցուցադրել է միայն այն մարդկանց, որոնց ցուցակը, Մատթէոս-Բագրատ-Մուրադբէզեան երրորդութեան չափ ու ձևով կազմելուց յետոյ, յանձնարարել է նորան տեղակալի կողմից: Եւ այդ բանը, ինչպէս պնդում են էջմիածնում, պօստատանից և ուրիշ աղբիւրներից քաղած տեղեկութիւնների հիման վրայ, էժան չի նստել տեղակալ Սուրէնեանի վրայ. նրա գլխաւոր դուրս եկած կաշառքները ոմանք 20,000 և ոմանք 60,000 ռ. են համարում:

«Հորիզոնը» դատափեսում է Մանկունուն, փրփրելով Օրմանեանականների դէմ, մինչ զեռ յայտնի է, որ վերջիններից և ոչ մէկին չի ընտրել ուեւ Մանկունին:

Մանկունու յաճոցանքը աւելի շուտ պարտաւոր էր քուէլ և արդէն քուէց իսկ Հորիզոն թերթը, որովհետեւ Մանկունու միջոցով նշանակւած խարդախները Հորիզոնական-մեծամասնական բանակի շարքերն էին սոււարացրել: Ի՞նչ կապ Մանկունու և Օրմանեանականների մէջ: Չէ՞ որ Սուրէնեանը Հորիզոնի թեկնածուն էր, իսկ կաշառւած Մանկունին, նրա ընտրութեան համար աշխատող և անուղղակի կերպով Հորիզոնի հակառակորդ Օրմանեանական բանակի դէմ կրուող է դուրս եկել:

Ի՞նչով բացաղբել Հորիզոնի այդ հակասութիւններից յերկրւած առաջնորդողը, որով նա իւր երեկւայ բարեկամներին դնում է ամհօրեայ թշնամիների կողքին և երկսին էլ պարսաւում միաժամանակ, միացրած:

Սրանից երևում է, որ համոզմունքներ մշակող այդ թերթն անգամ և նորա հոգով համակւած պատգամաւորները ուզեցել են կեղծել, խարելով կողմնակից ձևանալ և զեռ ձևանում էլ են իրանց թշնամի մարդկանց:

## II

Մինչև այժմ միւս թերթերն էլ, անվերջ տպաւորութիւններով խօսում են անարդարութիւնների, բռնադատումների մասին, որ մեծամասնական պատգամաւորութիւնը գործել է փոքրամասնութեան դէմ: Սակայն այն, ինչ կատարեց փոքրամասն մեծամասնականներից, մեծամասնութեան դէմ՝ միայն հարևանցիօրէն, մութ ախնարկներով յիշելով, քննութեան չա-

ւան, հասարակութեան առաջ բաց չարին թերթերը: Որքան հետեւեցինք մեր մամուլին, բացի «Հորի-դոնից», ոչ մէկը թերթերից և ոչ հայ ժողովուրդը գոհ չմնացին, բաւարար չհամարեցին ընտրութեան հետեւանքները: «Հորիդոնն» էլ գոհ չէ. նա էլ է ճանաչում տեղակալ Սուրէնեանին. բայց ամենից լաւ իմանալով այդպիսի ընտրութեան հետեւանքների գաղտնիքը, թըղթակցի նկարագրածի պէս, դաւաճանութեան հեղինակներին անձամբ լաւ ճանաչելով, այնուամենայնիւ ստիպւած է, բաւարար համարել դժգոհ չերևալ:

Մեզ յայտնի մի քանի յիշեալ վանականները դաւադրութիւններով յաջողեցրին Սուրէնեանի ընտրութիւնը:

Սոյն աշխատութեամբ, խղճի մտօք, ամեն անձնական նկատումներից հեռու, հրապարակ ենք հանելու ճշմարտութիւնը և արդ հասարակութիւնը թող տեսնի, թէ ինչպիսի որդեր են սողում նրա սրտում, նրա սրբավայրի էջմիածնի կամարների տակ. և ի՞նչ ամօթալի դեր է կատարում մամուլը, եթէ կեղծելով թագցնում է հասարակութիւնից բուն իրողութիւնները, մինչև օրս հրապարակ չի հանում ինտրիգայի արխիւրահոչակ հեղինակներին:

Կատարւած փաստը ծանրացել է հասարակութեան խղճի վրայ, որովհետև նա է համարում այս գործի տէրը պատասխանատուն: Նա պիտի դատի իւր իրաւունքները բռնաբարողներին:

Գ. Գ. Լ Ն Ա Խ.

Դնտրիզան—երկու վարդապետ և մի եպիսկոպոս

I.

Ընտրական պայքարում պարզեց, որ հայ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը կողմնակից դուրս եկաւ Օրմանեան սրբազանին: Նորան կողմնակից դուրս եկան և մեր ամենապատրաստի, լուրջ հոգեւորականները:

Սակայն առաջին և ճնշող փաստն այն է, որ փոքրամասն հակաօրմանեանականները շահեցին ամենաշատ ձայները ընտրութեան ժամանակ, դարձան մեծամասնութիւն:

Այս գրութիւնը ստեղծեց, ինչպէս յիշեցի, Սուրէնեանի և Մանկունու գործադրած խարդախ միջոցներով:

Ապօրինի վարեց և ազգային ժողովը սահմանափակումներ անելով և հրահանգներ արձակելով ընդդէմ Օրմանեանի. նոյն Պօլսի ոչ օրինական թւով գումարւած արխիւրահոչակ համագումար ժողովն էլ հերձեածով սպառնաց ուստիայերին, Օրմանեանի թեկնածութիւնը անցկացնելու դէպքում և դրանով վիրաւորեց իւր ազգակիցների արժանապատուութիւնը:

էջմիածնի հակաօրմանեանական անդամներից կազմւած Սինօզն էլ միջամտեց ընտրութեան գործում յաճախ, վաւերացնելով սինօզականներին ձեռնառու մարդկանց ապօրինի ընտրութիւնները և ընդհակառակը բեկանելով օրմանեանական պատգամաւորների նոյնիսկ օրինական ընտրութիւնները:

Այս բոլորը մեր, Օրմանեանի թեկնածութիւնը պաշտպանող մամուլի օրգաններում ընդարձակ էջեր գրուեց:

Պակաս չնկարողուցեց եւ մեծամասնական ու փոքրամասնական պատգամաւորների մէջ առաջ եկած տարածայնութիւնները: Ներկայ ընտրութիւնը, բոլոր նախորդներից միանամուտ մասնակցութիւն առաջ բերելով հասարակական ընդարձակ խաւերի մէջ պիտի աւելի լուրջ լինէր, ամենախելացի եւ ամենայաջող հետեանքն ունենար:

Սակայն այստեղ խօսում է մի բարդ եւ ամենաճշդ փաստ, որ մեծամասնական-հակաօրմանեանական բանակը Սամսոն Յարութիւնեանների, Տ. Յովհաննիսեանների եւ այլ պարապլուխների կողմից թշնամի յայտարարւած օրմանեանականներին ճշելուց յետոյ, չկարողացաւ յաջողեցնել իւր ցանկացածի ընտրութիւնը:

Եւ մեծամասնական հիասթափւածներից շատերը խոստովանեցին, որ գերադասելի էր նոցա համար իսկ Օրմանեանը քան «փտութեան օջախից դուրս եկած ամենամաշուած փտութիւնը»...

II.

Ի՞նչ տեսակէտով առաջնորդեց պատգամաւորական ժողովը:

Նա հասկացաւ, որ կաթողիկոսը, թէ իբրև բիւրօկրատ իշխանաւոր եւ թէ որպէս սահմանափակ իրաւունքներով—ընտրեալ կամ նշանակովի խորհրդականներով կառույցարող թէ՛ դիտութիւն եւ թէ խելք պիտի ունենայ: Ներկայ քաղաքական պայմաններում մեր թէ՛ սահմանադրական հակումներ ունեցող եւ թէ բիւրօկրատական ոգու տէր կաթողիկոսները դատապարտ-

ւած են միանձնեայ իշխանութեամբ վարելու իրանց գործերը:

Այս այսպէս լինելուց յետոյ այլևս միտք ունէ՞ր որոշ թեկնածուներէ, իբրև հակաժողովրդավար մարդկանց չգիտեմ ճիշդս ուղիղ, արհամարհելը, անտես առնելով նոցա գերազանց արժանիքները:

Միանգամայն սխալ եւ թիւր հասկացողութիւն, որ մեխել էր ուղեղներում, եւ որին զո՞ գնաց շատ բան այս պատմական օրերում:

Ոմանք այս սխալ հայեացքով էին առաջնորդւում, ոմանք էլ այդ տեսակէտը դիտաւորեալ կերպով շահագործելով խաբեցին միամիտներին եւ զո՞ դարձրին շատերին մի անսիրտ խարդաւանանքի:

Ընտրուեց Սուրէնեանը հետեւելով կուլիսների յետեւում թագնւած սեազգեստների ցուցումներին, նախապատրաստելով իւր անփառունակ վեհափառութիւնը: Նա չի վաշխում ազատ քէներով արտայայտւած համաժողովրդական մտահոսութիւնը: Հոգով եւ զգացմունքներով յետագէմ, կղերական այդ մարդը օգուեց ազատամիտների բարեհաճ վերաբերմունքից եւ շահեց նոցա երրորդական թեկնածու համարելու անպաշտութիւնը միայն...

III

Իզմիրլեանի մահանից անմիջապէս յետոյ մըտքերը, առաւելապէս էջմիածնում, զբաղւած էին, ներկայ կաթողիկոսի ընտրութեան խնդրով: Տեսնենք այդ ժամանակ ի՞նչ էր կատարւում այնտեղ օրը ցերեկով, աչքերնիս առաջ: Մենք տեսնում էինք սերտ բարեկամական, ընկերական յարաբերութիւնների մէջ Մատթէոս եւ Բազրատ վարդապետներին, որոնք նոր բարեկամացել են Երեանի փոխ-թեմակալի հետ, դոցա զոր-

ծակցում է ոմն Աբէլ արեղայ. երևում է անհամերաշխ չէ և Բարզէն վարդապետը... Այդ միութիւնը կազմել է և դեռ այսօր էլ գոյութիւն ունի: Եւ միացման կապը ընկերական սէքը, իրար նկատմամբ տածած համակրանքը չէ: Ընդհակառակը. դոքա ներքուստ իրար սուկալի կերպով ատող նախանձող մարդիկ են, ինչպէս վկայում են Էջմիածնում չեզօք անձնաւորութիւններ:

Միայն անձնական յետին դիտաւորութիւնները, որ բոլորի մօտ միևնոյնը չեն, այնուամենայնիւ միացրել են դոցա կեղծ ընկերական կապերով: Յիշեցինք 4-5 ա՛ւ ւճներ. սակայն կան ուրիշներն էլ, որոնց մասին խօսում են ոմանք. մասամբ ակնաբկում է և մամուլում:

Այդպիսիներից է նախ և առաջ կասկածելի վարքի տէր Յուսիկ արքեպ., որը Մինոզի անդամ է, «Արարատ»-ի մինչայժմեան անկարող խմբագիրը, ապագայ տեղակալը:

Ակնարկում են երբեմն և Մեսրոպ եպ.-ին, սակայն մոռանում են, որ դաւադրութիւնը հէնց Մեսրոպի դէմ էր, հէնց նրան էլ տապալելու ծրագիր էր մըշակած. ճիշտ է նրա գլխի տակը փափուկ բարձր էին դնում իրա չնաշխարհիկ բարեկամները, և եթէ Մեսրոպ եպիս. միամտութեամբ խարել է ու մասնակցել խմբակի գործունէութեանը, անպայման թիւրիմացութեան մէջ է ընկել նա: Ընտրութեան օրերում Բաղրատ, Մատթէոս և այլք ուզեցել են նոյնիսկ քառանուն ցանկի մէջ չ'մտցնել Մեսրոպ եպ. (ի բաց առեալ Բարզէն վ.):

Սակայն երկրորդական, համակերպող կամ անւանապէս մասնակցող շատ Սուրէնեանական գաղտնի միութեան անդամները, ենթարկւողի դերում, միայն հեռու են իսկական ինտրիգան ծրագրողներին, և իս-

կական հեղինակներին. մենք շուտով կ'տեսնենք դոցա: Սուրբաբէգեանը անցած տարի մի շնամարանաւարտի պաշտօն տւեց թեմական դպրոցում (վերակացութիւն), որը դեռ Բէրբէրեանի օրով ճանաչւում էր տեղակալի արբանեակ, որ և ոչ պակաս չափով խռովութիւնների պատճառ դառաւ, Բէրբէրեանի վրայ դատար կարգել տալով Մատթէոս վարդապետին:

Սուրբաբէգեանի և տեղակալի բարեկամը սարկ. դառաւ այս տարի. սկսեցին փայփայելով առաջ քաշել սրան. անյապաղ վարդապետացնում և կարգում են Գէորգեան ճեմարանի բարձր դասարանների (V. և VI.) ուսուցիչ Հայոց պատմութեան, մի առարկայ որ խլում են մասնագէտ դասատուի ձեռքերից և յանձնում նորեկ արեղային: Դեռ այդքանը չէ. նա արդէն անդամ է տպարանական վարչութեան, զանձապահ տպարանի և այլն, ի վերջոյ Մանկունուն հասած ցուցակից նշանակւած պատգամաւոր... Հաւատարիմ ծառայութիւնը վարձատրում են ընտրութիւնից յետոյ, վերոյիշեալ պաշտօնների վրայ աւելացնելով մի այլը՝ կարգելով նորան խմբագիր «Արարատ»ի Յուսիկ արք. փոխարէն: Փողեր իւրացնող խմբագրին փոխարինում են հաւեր գողացող արեղայով:

IV

Ամբողջ խարդաւանքը հեղինակիլ ու ծրագրել են երկու վարդապետ և մի եպիսկոպոս: Ինչ զրդիչներ առաջ ըրերին կազմակերպեցին այս միութիւնը, որը մինչև այսօր շատերի համար դեռ գաղտնիք է:

Այդպիսի մի երևոյթ լաւ հասկանալու համար, պիտի ճանաչել Էջմիածնի արգի միտարաններին, իմանալ թէ նոցանից իւրաքանչիւրը ի՞նչ մտածումներով ու դիտաւորութիւններով, ինչպիսի մօրթու մէջ է ա-

պրում, ինչ տիպ է: Իմ նպատակս է ժամանակի պատմական երևոյթը, որ իւր ամենատիպիկ արտայայտութիւնը գտաւ այս նշանաւոր օրերում, ճշգրիտ, լուստրանւած հրապարակ հանել: Աշխատենք վերլուծել, նախ գործի հեղինակներին, երեք միաբաններից իւրաքանչիւրին: Մենք ստիպւած ենք սահմանափակել:

Ն

Դոցանից Պորէն եպիս. միայնգամայն էժան գնով, խիստ արագութեամբ ժողովրդականութիւն ձեռք բերեց: Ինչպէս յայտնի է այդ, ժողովրդականութեան համբաւը նրա անունն էլ լսելի դարձրեց, իբրև կաթողիկոսական, նոյնիսկ առաջին ընտրելի:

Պորէն եպիսկոպոսը չնայած որ համեստ կրթութեան և չափաւոր զարգացման տէր մի մարդ է, դեռևս երիտասարդ և ոչ այնքան հասունացած, սակայն չպէտք է ուրանալ, որ հմայելու և գրաւելու բաւակաւնին մեծ ճարպիկութիւն ունի: Յաճախ ժողովրդական սեղբունքներ թոթովելով՝ նա հաճելի տպաւորութիւն է թողնում հայ ասպետների վրայ (рыцарь печальнаго базара), բայց երբէք սովորութիւն չունի կենդրոնից հեռանալու, հասարակ ժողովրդի խաւերը մտնելու, նրա ցաւերին դարման անելու: Եւ ո՞վ կայ այնտեղ որ լուսն ուղտը շինի, փող փչելով աննշան գործերը մեծարի, էլ ի՞նչ կարիք կայ:

Եւ հոգին դուրս գայ խեղճ գեղջուկին, օրերով թող գայ նրա դռանը չոքի և անվերջ զանգահարի նրան ընդունող չկայ: Լսել է անունը, յոյսերով եկել, սպասում է երկար ժամեր. բայց ահա գալիս է քաղաքացի վաճառականի մէկը կամ պարտէզեայ գլխարկաւոր մի տիկին, կէս բոպէի մէջ բացուում են դռները և յաճոյարար ներս է հրաւիրում նոցա ինքը եպիսկոպոսը, գիւղացու վրայ չ'նայելով անգամ:

Սերտ յարաբերութիւն պահպանելով բարձր դասակարգի հետ, նա երախտիք է անում իւր թեմի վարժապետներին, վերջիններին, անձամբ արժանացնելով իրանց պաշտօններին: Սուքա էլ իրանց հերթին եպիսկոպոսացրին նրան, այժմ էլ առաջարկեցին հայոց ազգի կաթողիկոս ընտրել Մուրադբէգեանին:

Ձահէլ սրբազանը խոհեմութիւն ունեցաւ չափելու և կշռելու հանգամանքները: Նա չ'նրապուրեց: Նա գիտէր որ իւր ժողովրդականութիւնը և համբաւը պարփակւած է միան մի փոքրիկ շրջանում, առաւուելն իւր թեմի մի մասում: Մի խաբուսիկ հանգամանք էլ՝ երիտասարդութիւնը և կալվերական հաճոյքներից այդպէս վաղաժամ զրկելու: ցաւը, ստիպեցին նորան չ'ցանկալ և չհաւատալ իր ընտրելու հնարաւորութեանը:

Պէտք էր հրաժարել, օր առաջ ասպարէզը թողնել ուրիշներին. բայց ի՞նչպիսիներին և յատկապէս որին. մի բան որ քիչ հոգս չէր կարող պատճառել նրան: Ներկայումս նա միանգամայն անկախ դիրք է ստեղծել իւր համար: Առանց փոքրիկ նկատողութեան անգամ ենթարկելու նա յանդգնութեամբ արհամարհում է Սիւսօղը, չ'հնադանդելով նրա կարգադրութիւններին: Սիւսօղը ուղարկում է Ն.Վ. Մելիք-Քանդեանին հաշիւ տեսնելու, պահանջելու նրանից էջմիածնին հասանելիք 20,000—30,000 ռ. վիճակային եկամուտները:

Իսկ Մուրադբէգեանը ցոյց է տալիս եկած ճանապարհը: Եւ միայն Մուրէնեանի ողէս տեղակալ, վաղւան կաթողիկոս, ոմն գող արքեպիսկոպոսի, Մատթէոս, Բարգէն և այլ վարդապետների նման մարդիկ կարող էին ներել այդպիսի յանդուգն վարմունքը:

Ի՞նչ կ'լինի հետեանքը, եթէ իւրաքանչիւր առաջնորդ, պաշտօնեայ, էջմիածնի եկամուտները կամայա-

կանօրէն կապի իւր թեմում տեղական կարիքների պատրւակով, և ո՞վ գիտէ ինչպիսի խաղեր խաղայ այդպիսի աչքի ընկնող գումարների գլխին: Այդպէս է արդի կացութիւնը, քանի որ ԼՂՄԻՐԱԾՆԻ Իշխանը մանուկ է: Եւ աւելի վատթարանալու է այսուհետև: Ահա թէ ինչո՞ւ Խորէն եպիսկոպոսը եռանդով աշխատում էր պահպանել իրերի ներկայ վիճակը հետզհետէ մեծացնելու համար իւր հեղինակութեան ու ժողովրդականութեան սահմանները, գործելու ոչ իրը փոխ-թեմակալ, այլ de facto կաթողիկոս Երևանի թեմի: Մինչև որ կ'հասնի ժամանակը, կանցնի երիտասարդութիւնը և իւր եպիսկոպոսական չինը սաղ կ'զայ իրան: Մինչայդ կ'մեռնի պառաւ կաթողիկոսը և միայն այն ժամանակ ինքը կանցնի թեկնածուների շարքը, և անկասկած կ'ընտրուի: Լաւ երազ է չէ: Միամիտ և տղայական կանխամտածութիւններ, որոնցով հրապուրւած եպիս. անվերջ փոխայցելութիւններ էր անում էջմիածին իւր սիրելի Բագրատին և Մատթէոսին, և միասին խորհում էին տեղակալի կաթողիկոսացման մասին:

Հրապարակում է և այն, որ չնաշխարհիկ ցուցակի Պօլիս ուղարկելու միտքը ա-ին անգամ Մուրադբէգեանի առաջնորդարանում է յղացել: Այնուհետև տեղի է ունենում այդ ցուցակի ճանապարհորդութիւնը էջմիածին և ընկնում է տեղակալ Սուրէնեանի առաջնակարգ կարեւորութիւն ունեցող պաշտօնական գործերի շարքը:

Խորէնի առաջնորդարանին է վերագրում այն տխուր իրողութեան՝ Կարապետ եպիսկոպոսին բողոքական միսիօներական ընկերութեան պատկանելու համար մեղադրող թերթի յերիւրանքը, որ ոմանք Մատթէսը վ. գործն են համարում: Եւ որպէս թէ երեւանում տպւած այդ թերթը դիտաւորեալ կերպով հը-

րատարակել են՝ իբրև Ալէքսանդապօլում տպւած և ոմն Ա. Յարութիւննեանի հեղինակութիւն. և որպէսդի չըկասկածեն թերթերը յանձնել են Ալէքսանդրապօլի քահանայ Խաչվանքեանին, որը իրօք բերել է էջմիածին և ցրւել է տեւ յատկապէս պատգամաւորների մէջ:

### VI

Այժմ եւ մօտենում եմ նրան, որի հմայքը և ժողովրդականութիւնը տարածուում է միայն այնտեղ, ուր ինքը չկայ, որտեղից ինքը շատ հեռու է... խորհրդաւոր մի տիպ.

Իմ խօսքը վերաբերում է ձեմարանի արդի տեսուչ Բագրատ վարդապետին, որի թեկնածութիւնն էլ կողմնակիցներ ունեցաւ: Մինչև անգամ մտածեցին անցկացնել նրան թեկնածուների շարքը, հայցելով իշխանութիւնից բացառիկ թոյլտուութիւն նրան ընտրելու հէնց այս անգամ:

Չկայ վանքում և ձեմարանում մէկը, որ չճանաչի Բագրատ վարդապետին: Ով դժբաղդութիւն է ունեցել գործ ունենալ նրա հետ, լսել ու հաւատացել է նրա խոստումներին, անպայման, խաբւել է:

Զարմանալի բան է:

Հաղիւ համալսարանի շեմքը միքանի անգամ կըրունկներով շօշափած այդ վարդապետը, Իգմիրլեանի օրով դիւանապետութեան հետ միասին յաջողեցրեց իւր սկզբում ժամանակաւոր, ապա մշտական տեսչութիւնը: Ձեմարանում վայելեց գրսեցիների վստահութիւնը, հոշակեց արժանիքերի տէր, կոչման համապատասխանող մի անձնաւորութիւն: Մինչդեռ այստեղ նա, իբրև դաստիարակ՝ ոչ մի համակրանք չի վայելում իւր սաներից. իբրև տեսուչ չունի ոչ մի հեղինակութիւն: Կասեն գուցէ, աշակերտի հոգեբանութիւնից

պիտի հետեցնել այդ: Ես չեմ ժխտում, որ աշակերտի բժախնդիր կրթիական շատ աւելի շատ ազատութիւնների է հասնում դպրոցի վարիչներին և ուսուցիչներին քննադատելիս:

Սակայն, որքան էլ բժախնդիր լինին, խստապահանջ աշակերտները, եթէ միայն արժանիքներ ունեցող դաստիարակների հետ են գործ ունենում, նոքա անպայման, կամ բացարձակապէս համակրում են, կամ առնւազն իրանք երկու մասի են բաժանուում. 1. միայն արժանիքները տեսնող՝ բարձրացնող և 2. պակասութիւնները տեսնող ու պախարակող:

Օրինակ ձեզ կարապետ եպիսկոպոսը իւր տեսչութեան օրով ձեմարանում, որին մինչև այսօր էլ շարունակում են սիրել ու մեծարել իր նախկին սաները. և Բէրբէրեանը, որի օրինակը աւելի ցայտուն կերպով է ապացուցանում իմ ասածը:

Նա տեսուչ էր և ուսուցիչ:

Բոլորը տեսան նրա ուսուցչական ձիրքն ու ընդունակութիւնը և թէ նրա կողմնակից և թէ թշնամի աշակերտները, անխտիր, յարգեցին նրան ու սիրեցին, մեծարեցին նրան՝ իբրև ամենազնաճատելի ուսուցիչ: Իբրև տեսուչ պ. Բէրբէրեանը նախին կարգերի վերահաստատման կողմնակից դուրս եկաւ: Եւ դրա համար նա դուր չեկաւ Մեսրոպ եպ. ի տեսչութեան օրով կարգերը վերացնելուն ու արհամարհելուն վարժած ձեմարանցիներին:

Սակայն իւր լուսաւոր գաղափարների, ազնիւ ձգտումների, աշխարհական ոգու ու քարոզած իդէալների համար նա պաշտեց ու սիրեց աշակերտների մի խոշոր հատւածից, ոչ բոլորից: Այժմ դառնանք Բագրատ վարդապետին:

Մի յատուկ դէպքի առթիւ «Հորիզոն»ի թղթակիցը

այսպէս է ընտրուում նրա անբաժան յատկանիշը, պարսկական խաբերայական կողմը. «Ուսումնական կարիքների համար ուսանողները կանչում են հայր տեսչին. նա խոստանում է՝ անել ինչ հարկաւոր է բայց ձգձգում է և վերջապէս հրաժարւում է գալու:»

Թւել հայր Բագրատի համար օրէնք ու պահանջ դառած նրա ամենօրեայ խաբերայութեանց բազմաթիւ դէպքերը մեզ շատ հետուն կը տանէր:

Թղթակցի յիշած դէպքը ևս լաւ յայտնի է. թըղթակիցը բաւականին անորոշ է արտայայտել: Բագրատ վ. ուսանողները կանչեցին. նա խոստացաւ գալ. որոշ ժամ նշանակեց, ուսանողները հաւաքւած սպասում են. կանչում են Բագրատ վ., սա խնդրում է, որ 5 րոպէ էլ սպասեն. անցում է 5 րոպէն, արդէն, Բագրատ վ. գումարւած մանկավարժական ժողովին է նախազանում:

Եւ այդպէս ամեն օր որևէ պատրւակով բացարձակապէս խաբելով, նա ձգձգեց, շարունակ հաւաքելով ու սպասեցնել տալով՝ ձանձրացրեց ու չեկաւ, և սակայն երբէք չ'հրաժարեց գալուց: Այլևս ինչպիսի տերմին գտնէինք մենք խաբերայ բառի փոխարէն հայերենի բառագրքում որակելու համար հայր սուրբի այդ երևելի առաքինութիւնը, առանց վիրաւորելու նրան:

Բայց եթէ մէկը զուրկ չէ մարդկային ամենատարրական արժանիքներից, նա չի թոյլ տայ իրան այսպիսի վարմունք, որը պատիւ չի բերում ոչ իւր անւանը և ոչ կոչմանը: Եւ ինչ յարգանք այն տեսչին որ որ պաշտօնեայ և աշակերտ լրտեսներից է միայն հաւաքում իւր տեղեկութիւնները զանազան ուսանողաշակերտների մասին:

Աշակերտի, աւելի շատ ուսանողի ու որովհետև ամենից աւելի դոցա է հետամտում Բագրատ վ. ամե-

նաանմեղ քայլը, նրա անհատական կեանքին վերաբերող ամենաչնչին դէպքերը անմիջապէս հաղորդուած են նորան: Ինչպէս ապացուցեցինք մեր այս մեղադրանքը, թե՛նք բազմաթիւ դէպքերի շարքը, մենք վախենում ենք, որ դէպքերից Բագրատ վ. Իսկոյն յիշի անձնաւորութիւններին և նորից սկսի իւր խաղերը այդ զըժբաղդների գլխին:

Բայց ի՞նչ կարիք կայ մանրամասնութիւններէ մէջ ընկնել և խեղճ ուսանողներին վտանքի ենթարկել, քանի որ Բագրատ վ. ինքը յաճախ առիթ է ունեցել ասելու որ, «ամեն բան ինքը գիտէ, և միշտ էլ կիմանայ:» Անվերջ դաւերի մի ցանց է նրա ամբողջ տեսչավարութիւնը: Անխափք միջոցներով է վարում նա իւր բոլոր պաշտօնական գործերը, շատ անգամ խլտրութիւն չդնելով աշակերտի և ուսուցչի մէջ: Խաբել, կեղծել բոլորին. ահա այն դժբաղդ եզրակացութիւնը, որ կարելի է Բագրատ վարդապետի մասին արտաբերել նրա երկամեայ գործունէութիւնից: Նրան այստեղ բնորոշում են Արևելեան քաղաքագէտ Կատոսով նրա կեղծ քաղաքավարութեան, բռնազրօսիկ ժպիտներով արած խոստումները ու լքումները և ինտրիգաւոր վարմունքների վարմունքների համար, ինտրիգներ, որոնցից հիւսւած ծուղակների մէջ ընկած աշակերտները մնացին հրասթափուած ու ոտնահարւած:

Բարեբաղդաբար աշակերտները չեն նայում նրան որպէս պիտանի օրինակի վրայ. բացարձակապէս ժլտտելով որեէ արժանիք նրա մէջ, աշխատում են փոխադարձ կեղծութեամբ խաբել նրան, վստահել իրանց հնազանդութիւնը և զզուշանալ այլևս ծուղակի մէջ ընկնելուց:

— Հայր սուրբ, ասում է ուսանողը, ինձ վրա այլևս որեէ նկատողութիւն կարծեմ չ'պիտի ունենար.

Ես հնազանդ եմ եղել և պիտի մնամ ձեռարանի կարգ ու կանոնին:

— Այո, այո, վրայ է բերում հայր սուրբը, ուղիղ է, մանաւանդ ժողովի վերջին որոշումից յետոյ...

— Ուրեմն երբ կարող եմ ստանալ այդ 15 բնպաստադրամը.

— Ոչ ուշ, վաղը առաւօտեան եկէք...

Տեսչից առաջ, դիւանատան դռան արդէն սպասում է ուսանողը.

— Այո, տեղակալին յայտնեցի ձեր մասին, երեկոյեան եկէք:

Սոնարհ գլուխ տալով, երեկոյեան էլի հայր սուրբի առաջ կանգնած է խնդրատուն:

Այս անգամ էլ հայր սուրբի մօտի գումարը խուրդա չէր և այլն:

Նա համարւում է անյաջող տիպի խաչագող, որովհետև նրա տիպիքական խորամանկութիւնն ու ծուռ միջոցները փոխանակ ըողարկելու, մերկացրել են նրան: Դրեւ կեղծող, խաբերայ էջմիածնում բոլորն են ճանաչում նրան:

Եւ նրա հետ խիստ զզուշութեամբ են գործ ունենում ուսուցիչն ու աշակերտը, վարդապետն ու եպիսկոպոսը. և այդ բաց, ամեն քայլափոխում արտայայտող խորամանկութեան պատճառով, նա չի վայելում սէր և յարգանք, ասում է նոյնիսկ առերես արբանեակներից:

Ելուրդային ճանապարհներով գործող, սողալու և և մազլցելու սովոր այդ ճիւղը ինչ կասկած, որ յետին մտքերով զեկալարէր և այս կաթող. ընտրութեան գործում:

Նախընտրական վերջին ամսում նա, գլխապատաս, մերթ երևան էր փախչում մերթ Թիֆլիս, երեսի վրայ թողնելով գործերը:

Եւ նա, որ մինչև այսօր անկարող եղաւ կենդանի խօսքով ու գործով, սիրով ու անկեղծութեամբ կապել իւր սաների հետ, վայելել նոցա սէրն ու համակրանք նա, որը ոչ միայն յարգանք չի վայելում այլ ատոււմ է շրջապատից, գէպի որը վստահութիւն չեն տածում նրա կուսակից ընկերներն անգամ, որը իւր մութ հաշիւների համար պատրաստ է զոհել գիտունը տգէտին և ոչ ինքն իսկ գիտուն է, որովհետև աղէսի խորամանկութեամբ գիտուն դառնալ չի կարելի և այդպիսի բացասական մի տիպ, որին ապացոյց նրա մի շարք տիտղոսները «Արևելեան քաղաքագէտ», «Պարսիկ խորամանկ» «Իգէալական ստախօս» և այլն, այսօր մեր հասարակական մտքի գեկալարների կողմից արժանաւոր ընտրելի է համարւում:

Մեր բոլոր բնորոշ ու փաստացի մերկացումները ամփոփել ենք ոչ թէ երկար որոնումներ անելով, այլ վերցրել ենք էջմիածնում նրա մասին ընդհանրացած կարծիքների համեմատ ամենապերճախօս փաստերով որոնք իրականութիւն լինելով հանդերձ անեկզօտի տպաւորութիւն են թողնում լսողի վրայ:

Դառնանք դեռ մեզ հետաքրքրող խնդրին. ինչ գեր կարող էր խաղացած լինել և ինչ իրօք արդէն խաղաց հրապարակօրէն այդ երանելի ասպետը, կաթ. ընտրութեան գործում:

Այստեղ իւր մտածումների մէջ նա համարեալ չի տարբերում Մուրադբէգեանից:

Սա համարեալ նոյն կերպ է մտածում, ինչպէս նրանից աւելի ազնիւ—Նպիսկոպոս զործակիցը:

Սա ևս բուրդը ականջից հանել է, գիտէ որ այս անգամ չեղաւ, թող միւս անգամ լինի. սաղութիւն լինի, կաթողիկոսն էլ ձերունի լինի և շուտ մեռնի: Այժմ Մուրադբէգեանի ընկերութիւնը թանկ արժէ. յետոյ էլ

նա խանգարել չի կարող. նրա հախից դալը դժւար չէ. չէ որ Մատթէոս վ. նրա ախպէր տղան է, խօ չի մեռել, ինչ ուզի զուլս չի բերի:

Նախ զդուշութիւն և պահպանել իրերի արդի կացութիւնը. մնալու անխաբատ միևնոյն դիրքում: Ընչտ է իշխանութիւնը տեղակալի օրով փաստապէս Մատթէոս վ. ձեռքումն է, սակայն նա էլ բոլորովին անմասն չի մնալու: Զէ որ վերջին դիւանապետն ինքն էր. ընկեր Մատթէոս հօ այնքան անագնիւ չի որ այդ պաշտօնը խլի նրանից...

Ազատամիտ ինտելիգէնտները մեծ հաւատ ու վստահութիւն ունեն գէպի Մուրադբէգեանը, որին և իրանց կուսակից են կարծում:

Մի տարի առաջ բոլորովին հակառակ կոյրծիք ունէին այդ մարդիկը Բազրատ վ.-ի մասին: Երբ վերջինս ամբացրեց իւր առերես բարեկամական ընկերական կապերը Մուրադբէգեանի հետ, նա էլ դարձաւ նոցա մարդը, նոքա նոյնիսկ, ձեռնառու համարեցին նրա նման մի տեսուչ ունենալը ձեմարանում:

Այս տարի ինձ յաճախ է պատահել վէճի բռնել այդ մարդկանց հետ. նոքա ասում են—ինչ փաստ, որ Բազրատ վ.-ը կըթուլեամբ ցածր է իր հսկողութեանը ենթակայ համարեալ բոլոր ուսուցիչներից: Եւ ինչ փաստ, որ նա ներկայ գտնուելով շատ դասերի բան չի հասկանայ ու չի կարող վերահասու լինել թերութիւններին: Բաւական է որ նա «Մերային» է մեր մարդկանցով կ'ըջապատի իրան:

Պէտք է ցրել և այն թիւր կարծիքը, որ իբր Բազրատ վ.-ի օրով ամեն ինչ լաւ է, որովհետև աղմուկներ չկան ձեմարանում: Աշակերտներին ոչ կըտրուկ կողմնակի միջոցներով ճնշելուց ու նոցա դժգոհութիւնները խեղդելուց յետոյ, նա հազիւ հազ կօլա է տանում գործերը:

Իբրև տարացոյց նրա ամենաթշուառ պաշտօնավարութեան՝ մատնանշում ենք ուսումնական տարւայ վերջում տեղակալին ուղարկւած ուսանողներէ բազմաստորագիր տեղեկագիրը Բագրատ վարդապետի և նրա օրով ձեմարանի ընկած վիճակի մասին, որի համար էլ նոքա պատժեցին տեղակալի անունից, ի յարկէ Բագրատ վ.-ի ցանկութեամբ, զրկելով էջմիածնի խընամքից, երթեկ ուսանողներ համարելով:

Պաշտօնի նախանձախնդիր այդ մարդը ոչնչով չի կարողացել բարւոքիլ ձեմարանի կրթականը: Մագլցելով տեսչութիւնը ձեռք բերելուց յետոյ, նա ամեն հաշիւ անում է մագլցելու մինչև հայրապետական աթոռը:

VIII

Ինչ վերաբերում է Մատթէոս վարդապետին \*), պէտք է ասել, որ նա է համարուում այս բոլոր անհատական անձնական շահերի կշռադատողը և համբերախութիւն ստեղծողը ընկերներէ մէջ, նաև ամենահանճարեղ հեղինակը էջմիածնական խնդիրների:

Ես գիտեմ, որ չափով կարող է այս բոլորը, ինչ որ գիտեցի սեփականութիւն համարել Մատթէոս վ. միայն նրա գերը, մասնակցութիւնը այս գործում և ախրող կարգերում նրա անձնական շահերի ներկայութիւնը, ի հաշիւ և յօգուտ տեղակալի նրա ձեռք բերած արտօնութիւնները ասում են, որ նա եղել է ամենամեծ չափով զրութեան տէր Սուրէնեանի տեղակալութեան օրով և կիմայ էլ նրա կաթողիկոսութեան ժամանակ. և այդ բոլորը չէր կարող չզխտակցել և չը

\*) Մոյն թւի «Հոր.»-ի № 2 տպւած նամակը կատարեալ խաչագողութիւն է. դժբաղդարար հնարաւոր չեղաւ գրքուսն գետեղել այդ:

հասկանալ Մատթէոս վ. եւ եթէ նոյնիսկ նա չէ միակ հեղինակը վերագրեալի և չէ թելադրողը միւսներին նոցա շահերի մասին, անհասկած է նրա անմիջական առաւել գործակցութիւնը իւր ընկերներին, նրա և Բագրատ վարդապետի յարաբերութիւնները այնքան սերտացել են, որ ապրում են միեւնոյն քնակարանում: Թէպէտ և դժւար է ենթարկել, որ անպազայ կաթողիկոսից եպիսկոպոսական աստիճանը ստանալուց դէնք, նա յոյս ունենայ ձեռք քցել և կաթողիկոսական գահը բայց այդ հանգամանքը երբէք մոռանալ տալ չէր կարող նրան իւր դիրքը, վստահութիւնը, իւր ազդեցութեան ոյժը, մի խօսքով այն բոլորը, ինչ որ դրւած էր նրան արդի տեղակալի օրօք, որ չէր տայ նրան մի Մեսրոպ եպ. կամ Դուրեան արքեպիսկոպոս, առաւել ևս Օրմանեան և Կարապետ:

Որքան էլ որ մեր բնորոշումները թերի լինին, թերի ոչ ճշմարտութեան չ'համապատասխանելու, այլ այլեայլ անձնական ուրիշ դրդիչներ էլ մէջ չ'բերելու կողմից, մի բան, որ մեզ շատ հեռուն կ'տանէր, այնուամենայնիւ ընդհանուր գծերով, թուում է թէ բաւարար չափով արտայայտեցինք մեր հասարակութեանը պատիւ չբերող այդ աֆերիստների տիպերը:

Իոքա երեքն էլ իրար մէջ բաժանած գերերով լրացնում են իրար և փոխադարձ կապերով միացած մի միութեան շուրջն են խմբում իւրաքանչիւրը իւր համախոհին, իրանց ստորադրեալներին:

Որքան էլ այդ պատասխանատու գործը չէր կարող յաջողել մեզ մանրակրկիտ փաստերով ապացուցանելու, սակայն ի նկատի ունենալով, որ մեր բոլոր ասածները արդէն ակներև են դառել ընտրութեան հետևանքներից յետոյ, վերոյիշեալ անհատների մասին մեր բոլոր ասածները իբրև այլևս որևէ կասկածանքի

չենթարկուող բացարձակ ճշմարտութիւններ՝ գիտակից հասարակութեան ուշադրութեանն ենք արժանացնում, նրա դատաստանին յանձնում:

VIII

Այս միութիւնը՝ անդամներից իւրաքանչիւրի կողմից մտածւած է իբրև ժամանակակաւոր անհրաժեշտութիւն: Դրանցից իւրաքանչիւրը երազում է և վերապահում իրան միևնոյնը. ամենքն էլ ուզում են կաթողիկոս լինել, ժողովրդականութիւն մեծացնել, սեսուէ, դիւանապետ դառնալ ևայլն:

Սակայն այդ հանգամանքը չի խանգարում միութիւնը, փոխադարձ ընկերասիրական պատրանքների մէջ: Որքան էլ նոյնաման և տարբերին նոցա շահերը աջուամենայնիւ միատեսակ մտածելակերպի, նոյն բարոյական մակարդակի վրայ կանգնած այդ տխրահոշակ վանականները ստիպւած էին միութեամբ զուլիս բերել իրանց գաւազրութիւնը, մտածւած խաղը ընդհատողային ընտրութեան գործում, որի հետևանքը պատմութիւնը կ'արձանագրէի անշուշտ իբրև անպատուութիւն հայ ժողովրդի, հայ ազգի հասցէին, որ յանձին իւր աշխարհական ու հոգևորական դասի պատգամաւորութիւն ակամայ հայրապետական դահը յանձնում է նրան, որին հէնց ինքը անարժան է տեսնում:

Ինչ շատ վաղուց Օրմանեանակախները պարտութեան դէպքում ենթադրեալ չորս թեկնածուներից մէկը համարւում էր Մեսրոպ կաթողիկոսը: Մի մարդ որ թէպէտ նոցա հակառակորդը չէ, այլ առերևոյթ կուսակիցը փայլ ձևի հակաօրմանեական միութեան անդամը, սակայն ընտրելուց յետոյ նրան շատ մեծ վտանգութիւն տածել չէր կարելի:

Մեսրոպ եպ. կգործէր ինքնուրոյն և անկախ, սե-

փական խելքով ու կամքով. նա չէր բաժանի կաթողիկոսական իշխանութիւնը համախոհների խմբակին, նա դեռ կգործէր ու կարող էր ապրել շատ երկար:

Մինչդեռ մարդիկ հերթի են սպասում. սրտատրոփ. իսկ Մեսրոպի օրով իրանց դժւար թէ հերթը հասնի. իրանց հետ դուցէ զերեզման իջեցնէին կաթողիկոսանալու բոլոր յոյսերն ու սպասելիքները:

Իսկ այդ գործերի, լաւ լաւ պաշտօնների ինքնիշխան տիրապետութիւնը... որքան կասկածելի էր Մեսրոպ եպ. իշխանութեան օրով: Ամենից լուրջ դժւարութիւն էր ներկայացնում Դուրեան արք. տաճկահայ պագամաւորների իսկական թեկնածուի տապալումը: գաղտնի դաւերը այդ ժամանակահատից արդէն ծրարել էին այդ երեք էջմիածնակահները այդ երկսի դէմ: Վաղօրօք նորքա նախապատրաստեցին հանգամանքները՝ նախ սակայցնելով տգէտ, իրանց ձեռքում գործիք դառած էջմ. միաբան պատգամաւորների թիւը, անցկացնելով այգպլիսիներին Պօլիս ուղարկւած տըխրահոշակ ցուցակում: Դրանից յետոյ, ամենագոյշ կերպով, քայլ առ քայլ հետևելով բոլոր նպատակներ ու աննպատակ հանգամանքներին, հսկում են աշարջութեամբ, ձեռքից բաց չթողնելու յաջող բոլորները գլուխ բերելու նրա ընտրութիւնը, որի կամակատարութիւնից օգուտ քաղելով պիտի անվերջ կամայակախութիւնների զոհ դարձնեն էջմիածինը և նրան ենթակայ հաստատութիւնները:

Իոցանից և ոչ մէկը համարձակութիւն չունեցաւ, երևի անխոհմտութիւն համարելով, գէթ մի անգամ լսելի դարձնել իրանց ընտրելիի անունը:

Մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ ամենայն զգուշութիւն բանեցնելով կրթէք չասացին ու չհամոզեցին մէկն ու մէկին ընդունելու թէ Սուրէ-

նեանը արժանաւոր ընտրելի է:

Ընդհակառակը, տեղն ընկած ժամանակ դոքա էլ էին ասում թէ իրանց առաջին ընտրելին Դուրեանն է:

Նոքա իրանց արամադրութեան տակ ունէին իրանց ստորագրեալներին:

Մէկին ընտրել էր աւել և Սեանից բերել Մուրադբէգեանը:

Եւ միայն տեղակալի ընտրութեան յոյսով հըրձում է Սեանի միաբանը, երազելով, որ ինչպէս խոստացել են, էջմիածին պիտի փոխադրեն իրան Զուլոյեան վ.-ի նման:

(Նրա ծառայութիւնը վարձատրեցին իւր օրումը չ'տեսած փիլոնով):

Սրա նման բազմաթիւ թերուս, տղէտ պատգամաւորներ որոնք միայն անպատուութիւն կարող էին իրանց ընտրող տաճկահայ թեմերին, տիրող պայմաններում սանձւած են յիշեալ երեք սեղադեմներէից:

Մտածել թէ այդ թերուաները այն աստիճանի խորամանկութիւն կարողանային բանեցնել և սեփական խելքով ծրագրէին ու վճռէին դաւադրութիւնը, աւելի քան միամտութիւն կ'լինէր:

Եւ ունիւից կարող էր թելադրել անգրագէտ Սեանի միաբանը, եթէ ոչ իւր անմիջական իշխանաւոր Խորէնից, որը նրան ընտրել է աւել առանց նրա գիտութեան և հեռագրով կանչել ու բերել է:

Կամ ո՞ւմ պիտի լսէր իրան ընտրող թեմի անունն անգամ կրկնել, սովորել չ'կարողացող մի կիսագրագէտ Զուլոյեան...

Կամ ո՞ւմ պիտի լսէին մնացեալ տղէտները, որոնց լինել չ'լինելը Մուրէնեանից, առաւելապէս վերջնիս վրայ իշխող Մատթէոս-Բագրատներէից է կախւած:

Դեկտեմբերի 12-ի վերջին նախապատրաստական

ժողովից յետոյ, երբ պարզւել է, որ մեծամասնականները միայն Դուրեանին են առաջին ընտրելի համարում և բարեհաճ արամադրւած են դէպի Մուրէնեանը, նոյնիսկ ցանկութիւն կայ նրան ձայներ տալու երկրորդ ընտրելի դուրս բերելու համար, անմիջապէս երեք ինտրիգանաները որոշում են օգտւել այդ հանգամանքից:

Հազիւ մի քանի ժամ է մնացել, որ փակեն տաճարում և կատարեն վերջնական ընտրութիւնը:

Նոքա շապտով խմբում են իրանց 32 Մուրէնեանական համախոհներից 19 հոգու, առաւօտեան միջուով, խորհրդակցում և որոշում Մուրէնեանից բացի մնացած երեքին սև քւէ տալ, նոյնիսկ Դուրեանին, որին երկկոյեան բոլորն էլ սպիտակ էին աւել:

Ապա դիմում են Տաճկահայ պատգամաւորներից շատերին և առաջարկում Մուրէնեանի արժանապատուութիւնը վիրաւորած չ'լինելու համար, նրան ձայներ տան, երկրորդը ընտրելու պատուակով. հակառակ դէպքում սպառնում են իրանց ձայները չ'տալ Դուրեանին: Թիւրքահայերը խոստանում են, որովհետև նոցա համար կարևոր չէր թէ ո՞վ կ'լինի երկրորդը:

Եւ որովհետև ամենից առաջ զրւած էր Մուրէնեանի տուփը և եթէ թիւրքահայ պատգամաւորները իրանց խոստումը չ'կատարէին, կիմացէր և կ'զրգոզէին վարդապետներին և փառաւոր չէր լինի Դուրեանի ընտրութիւնը, ուստի չեն խնայում 26 ձայն Մուրէնեանին: Երկկող են կրում թէ մի գուցէ հետեանքը ստացէր այն, որ դաւադրութիւնը պսակէր միայն նրանով, որ Մուրէնեանը առաջին ընտրելի դուրս գալու փոխարէն, իրօք երկրորդ ընտրելի դառնար:

Այդ հաշուով են բացատրում էջմիածնում անօնիմ թղթակցի յատկապէս Դուրեանի տուփից դուրս գալը:

Մեծամասնական Սուրէնեանականները կամ նոցանից մէկ վարդապետ միայն ծանր կասկածի են ենթարկել ուզում Դուրեանին, որպէսզի կառավարութիւնն անպայման Սուրէնեանին հաստատի, երկրորդ ընտրելի դուրս գալու դէպքում էլ: Մամուլը այդ թուղթը մի Օրմանեանականի գործ համարեց, և ամբողջ ընտրութիւնը բեկանելու մտքով եղած են համարում: Դա գեռ չ'բացատրեւած մի գաղտնիք է:

IX

Ուշիմ կերպով հետեւելով ընտրութիւնների ընթացքին, ճանաչել ենք զանազան ուղղութիւններն ու հոսանքները: Մենք գիտէինք և գուշակում էինք հետևանքները:

Հրապարակի վրայ պայքարում էին երկու կուսակցութիւնները՝ Օրմանեանական փոքրամասնութիւնը և հակաօրմանեանական մեծամասնութիւնը:

Հակա-Օրմանեանական մեծամասնութիւնը եկել էր մի գեւեղով տապալել Օրմանեանին: Պարագլուխները, մեծասնական ժողովի մի քէտրկութիւնից իմացան որ մեծամասնութիւնը միաձոյլ հակաօրմանեանական է:

Այդ մասին «Հորիզոն»-ի № 277-ում գրում է մեծամասնական պատգամաւորը. 64-ից մէկը միայն զրտաւ, \*) որ որևէ բարգուծեան առաջն առնելու համար, պէտք էր դնել Օրմանեանի անունը քառանուն ցանկի մէջ և սեպտեմբերին երկանունի ժամանակ: Նրան առարկեց, որ քառանուն մէջ մտնող անունները համարում են կաթողիկոսական դահին արժանի թեկնածուներ, մինչ Օրմանեանը չի կարող համարուել այդպէս; ուստի և չալտի մտնի այդ ցանկի մէջ»:

\*) Մինչգեռ նոցա թիւը 89 է, ուրեմն բացակայ են եղել 25 հոգի որոնք կարող էին հակառակ ձայն տալ:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, այդ մերժողական պատճառարանութիւնը մի սկզբունք է, որ արտայայտել է ժողովում մեծամասնական մի պատգամաւոր:

Ինչպէս յայտնի է, Իզմիրլեանին ընտրող նախորդ պատգամաւորական ժողովը այդ սկզբունքով չառաջնորդեց քառանուն ցանկը կազմելիս:

Նա ունէր իւր առաջին արժանաւորագոյն և երկրորդ արժանաւոր թեկնածուները. և որպէսզի անսպասելի հետևանքներ, հիասթափութիւն առաջ չգար, պատգամաւորական ժողովն այն ժամանակ զուշացաւ կաթողահին, որևէ մէկի կողմից ընդունելի, արժանաւոր թեկնածուի քառանուն ցանկի մէջ մուծելու: Ընդհակառակը, քառանուն ցանկի մէջ մտցրին ամենամեծահասակական միւս երկու անունները, որով և անվտանգ դարձրին Իզմիրլեանի և Դուրեանի ընտրութիւնը: Սա և սկզբունք և տակախայի գործ էր: Այս անգամ պայքարող մեծամասնութիւնը հրճում էր իւր տարած յաղթանակով, տեսնելով հակառակ բանակի, փոքրամասնութեան ընկճեւած ու յուսահատ դրութիւնը. վերջինս այլ ելք չգտաւ, քան եթէ դրութեան տէրերից օրինական մի զիջումն միայն հայցելուց:

12 ձայնի իրաւունք ունեցող պատգամաւորները պէտք է կազմէին քառանուն ցանկ. ինքը փոքրամասնութիւնը կազմելով  $\frac{1}{3}$ -ը, մանաւանդ որ նա արտանութիւնը կազմելով  $\frac{1}{2}$ -ի տրամալայտիչ էր հայութեան մօտաւորապէս  $\frac{1}{2}$ -ի տրամալայտութիւններին, 3 ընտրելիները վերապահելով մեծամասնութեանը, այսինքն ձայների  $\frac{2}{3}$ -ին ըստ արդարութեան պահանջում էր չիտղղել իւր ձայնը, չորրորդ տեղն էլ յատկացնել իւր թեկնածուին:

Սա ձեռնտու առաջարկ չէր. ուստի սկզբունք հանդէս եկաւ. հակառակ բանակի թեկնածուն քառա-

նուն ցանկի մէջ մտցնելը արդէն իսկ նրան ընդհանուրի կողմից Լուսաւորչի գահի արժանաւոր աթոռակալ ընդունել էր նշանակում:

«Ահա այդպէս էր», շարունակում է «Հոր»-ի թղթակից պատգամաւոր, որ մեծամասնութիւն վճռականօրէն մերժեց փոքրամասնութեան առաջարկը...:

Դուրեան և Մեսրոպ, ըստ մեծամասնութեան, արժանաւորագոյն թեկնածուներից յետոյ Սուրէնեան և Յովակիմեան արքեպիսկոպոսների քառանուն ցանկի մէջ մուծելը մի բուրժ տակախքական գործողութիւն է եղել, և ոչ երբէք մաքուր սկզբունքային վերաբերմունքից բղխող մի հետեանք: Այդ խնդրին էլի կ'զանք:

Մինչդեռ նախորդ պատգամ. ժողովը աւելի փափկանկատութիւն ունեցաւ, թէպէտ նա աւելի անհոգ լինելու իրաւունք ունէր, քան ներկայ ժողովը: Փոքրամասնութիւնն առաջարկում էր դնել իւր միակ թեկնածուի քէտտուփն էլ, անցկացնելով նրան քառանուն ցանկի մէջ: Մեծամասնութիւնը մերժեց:

Ունէ՞ր այլ թեկնածու փոքրամասնութիւնը, կը համաձայնէր փոխարինել իւր ընտրելին մի ուրիշոյ, այդ պարզ իմացեց, որովհետեւ նա չարտայայտեց, հանդէս չբերաւ մէկ ուրիշին: Սակայն թէկուզ համաձայնէր էլ, մեծամասնութիւնը տրամադիր չէր փոքրամասնութեան համար որևէ պատուաւոր զիջում անելու: Օրմանեան սրբադանից զատ մեծամասնութիւնը պահանջում էր չտալ Կարապետ եպ. և Սուքիաս արք. անուններն էլ. դրանով էլ փակուում էր փոքրամասնութեան թեկնածուների ցանկը, և անուղղակի կիրպով մերժուում որևէ զիջումի առաջարկը: Մինչդեռ մեր թերթերից մէկը, շարունակ ազդողակում է, որ մեծամասնութիւնը պատրաստ է զիջումի, իսկ փոքրամասնութիւնը բռնանում էր:

Եթէ Օրմանեանին կամ նրա կողմնակիցներից մէկին քառանուն ցանկի մէջ մտցնելը և նոյնիսկ սեւացնելով հանդերձ, նրան «Կաթողիկոսական գահին արժանի թեկնածու» համարել էր նշանակում և որպէս անընդունելի իբր թէ այդ տեսակէտից էլ մերժեցին, մնում է եզրակացնել, որ նոցա փոխարէն քառանուն ցանկի մէջ մտածները մեծամասնութեան հայեցողութեամբ, կաթ. գահին աւելի արժանի թեկնածուներ են, քան Օրմանեան կամ Կարապետ եպ.:

Եթէ այս տրամաբանական եզրակացութեան համաձայն, մեծամասնութիւնը հետևողական եղած լինէր և սկզբունքով գործած, այն ժամանակ հետևանքներից նա առնուազն դո՞ւ պիտի մնար: Աշխարհական պատգամաւորները հէնց իրանք ամեն կողմով և ամեն քայլափոխում ապացոյցներ են տւել, որ իրանք գործել են ոչ սկզբունքով և ոչ տակախկայով. այդ ևս կը տեսնենք մենք յաջորդ զլիւում:

X

Աշխարհական պատգամաւորները, նախնական փոխադարձ համաձայնութեան պատճառով աւելացրին Սուրէնեանի սպիտակ քուէները՝ ըստ ոմանց, որպէս զի երկրորդ ընտրելի դուրս գայ, սակայն միաձայնութեան փորձով ընտրւած Դուրեանը ստանում է 32 սեքէ. աղմուկ են բարձրացնում այդ 32 ընկերների աւսորինակ խարբեայութեան համար դեռ տաճարում:

Այսպիսով պարզել է, որ մեծամասնութեան բանակում բնակւած են եղել 32 խարբեաներ, որոնք հանձարեղ ինտրիգանների կարգադրութեամբ ձևանալով լուս համամիտներ, որևէ կասկածի առիթ տւած չլինելու համար դեկտեմբերի 12-ի երեկոյեան կայացած նախընտրական ժողովում նոյնիսկ սպիտակ քէ

են տալիս Գուրեանին, նորա աւելորդ տեղը 26 սպիտակ քւէներ են կորզել ու լցրել Սուրէնեանի տուփի մէջ, որպէսզի «նա էլ գոնէ երկրորդը դուրս գայ»:

Հետեանքը ոչ միայն չգոհացրեց սկզբունքի անունից ճառելով գործող պատգամաւորներին, այլ և սաստիկ հիասթափեցրեց ու զղջալ տւեց նոցա՝ իրանց իսկ գործած սխալը:

89 հոգուց 31-ը սև քւէ էր տւել Սուրէնեանին. 26-ը սպիտակ քւէ էր տւել խաբելով:

Ուրեմն մեծամասնութեան  $\frac{2}{3}$ -ի, այսինքն 57 պատգամաւորի ընտրելին չի եղել Սուրէնեանը:

Եթէ խարդախութիւնը ծածկւած չլինէր և ոչ մութ, այլ բաց պայքարով ընտրութիւն կայացնէին մեծամասնականները, այն ժամանակ կստանային Գուրեան 57 ձայն, Մեսրոպ 39, Յովակիմեան 38 և Սուրէնեան 32 (Գուրեանին սև քւէ տւողները միայն):

Եթէ Սուրէնեանի ընտրութեանը ոչ նախանձախնդիր 57 մեծամասնականներին գումարենք հեռացած 32 օրմանեանականներին էլ, դուրս կգայ որ չնայած բոլոր նախնական խարդախ միջոցներին, ցուցակներով և կաշառքներով ընտրել տւած այնուամենայնիւ ընտրելու իրաւունքով եկած 121 պատգամաւորների  $\frac{2}{3}$ -ը դէմ է եղել Սուրէնեանին (89 հոգի),  $\frac{1}{2}$ -ը միայն Գուրեանին և այլն:

Օրինական ձևականութիւններով մի սնգամ կատարւած ընտրութեան ժամանակ Սուրէնեանը ստացել է 121 վճռական ձայնի իրաւունք ունեցող պատգամաւորների  $\frac{1}{2}$ -ից պակասի քւէները:

Ներկայ եղողների մօտաւորապէս  $\frac{2}{3}$ -ի քւէն, որով և 1 ձայնի առաւելութեամբ ընտրել է:

Այսպիսով Սուրէնեանին կաթող. զահին արժանի չհամարող 89 պատգամաւորները պարտուում են մե-

ծամասնութեան ծալքերում թաղցրած 32 վանականներից սրտանց Սուրէնեանին սպիտակ քւէ տւողներից ոչ մէկը չի գործել իւր ընտրողների թելադրանքով. ոչ մի պատգամաւոր ա-ին ընտրելի Սուրէնեանի համար մանդատ չի ստացել ընտրող ժողովրդից:

Արձանագրում ենք այս տխուր պատմական փաստը, վանական ինտրիգայի յաղթանակը: Ահա մեծամասնութեան ակամայ ընտրութիւնը, որ միանգամայն զուրկ է զաղափարական, աղգային-եկեղեցական շահերի զիտակցման իմաստից. սա ինտրիգա է, խարդաւանանք և ոչ երբէք ընտրութիւն, աղգային ժողովրդական կամքի արտայայտութիւն:

Միթէ այս բոլորը չի զգում և չգիտէ նորընտիր կաթողիկոսը:

Գիտէ... և իմանալով հանդերձ միթէ փառքի հասաւ նա, երբ զխտէ, որ համազգային նախասինքն է շրջապատել նրան...

XI

Ի՞նչ կատարւեց...

Մեր աղգային կեանքի յառաջադիմութեան, կուտուրական յառաջխաղացման ամենակարևոր գործօնի՝ զախաւոր էջմիածնի պատմութեան էջերից մէկն էլ սևացաւ:

Մեր եկեղեցու ծոցում ծնունդ առած վանական ինտրիգան, որ այնքան ցնցում առաջ բերեց Երուսաղէմում, այս անգամ աւելի հանճաշեղ կերպով երևան հանեց էջմիածնի սևահոգի միաբանութիւնը, յանձին մի քանի վանականների: Պատգամաւորների ճնշող մեծամասնութիւնը յետ մղեց հակառակ բանակը. և պարտւած Օրմանեանականութիւնը թողեց տաճարը չզաւաճանեց իւր համոզմունքներին:

Սակայն իսկական պարտութիւնը կրեց իսկական մե-

ծամանութիւնը. և ականաւոր պատգամաւորները՝ հասարակական երեւելի գործիչները, քաղաքապետը, բարձրակ. նախագահ և այլն. գրակ. գործիչներ, իմբադիրները, վիպասանները, բանաստեղծները, իրաւաբանները և այլն և այլն—գուրս եկան լքած ու յուսահատ, կատարելապէս խայտառակւած:

Եւ կարծէք մահան լինէր այն թափօրը, որ տաճարի դռներից ուղղեց նորակառոյց մատենադարանի պատշգամբը: Նրան ուղեկցում էր լուռ ժողովրդեան խուռն բազմութիւնը...

Պատշգամբի աստիճանների վրայ դասաւորեցին պատգամաւորները նկարելու և առաջին շարքում. կենտրոնում ընտրեալը. որին ճշում էր կարծէք մեռելային լուծիւնը.

Հագիւ պատգամաւորներից մի ձայն լսեց—կեցցէ Գէորգ V. սակայն նրա արձագանքը եղաւ խորը և ճշնշող լուծիւնը: Բազմահազար ժողովրդի մէջ մի մարդ անգամ չ'զմուռեց, որ իւր գոհունակութիւնը. համաձայնութիւնը յայտնէր:

\* \* \*

Տակաւին մի երկու օր էլ պատգամաւորներ երևում էին Էջմիածնում: Դժբաղդարար ընտրութիւնից յետոյ ես առիթ չունեցայ պատգամաւորներից մասնաւոր կարծիքներ լսելու հետեանքների մասին:

Կողմնակի անձերի տւած տեղեկութիւնների համաձայն ամենից աւելի վայրացել են Տաճկահայ պատգամաւորները. մինչև անգամ նոցանից ասողներ են եղել որ «այս պարագաներում այսպիսի վերաբերմունք ցոյց տալուց յետոյ թիւրքահայերին ցնում է այլս չըմասնակցել յետագայ կաթողիկոսական ընտրութիւններին»: Սակայն այդպիսի մի կարծիք, եթէ արտա-

յայտած էլ լինին տաճկահայ պատգամաւորները, որեւէ արժէքից զուրկ է և զրգուած տրամադրութեան արդիւնք կարելի է համարել:

Պերճախօս է մի այլ պատգամաւորի կարծիքը Բագրատ վ.-ի մասին:—«Աս ինչ ճիւղն է եղած. եթէ արդեւ չըլար անոր եպիսկոպոսական աստիճանին բացակայութիւնը, ան պիտի մեր առաջին ընտրելին ըլար...»

Վրդովւած և սրտարեկ պատգամաւորներից շատեր այլևս թիֆլիս էլ չհանդիպեցին, ինչպէս սպասում էր, և մի անգամից անցան սահմանը, տանելով իրանց բուռն զարոյթ հակակրանքը—Էջմիածնական հանձարեղ ինտրիզաններթ, թէ՛ ուստահայ ժողովրդի հասցէին:

Պիտի գնանք, ասում են. և ինչ պատասխան մեր ժողովրդին, մեզ ընտրողներին:—Արժէր այդքան չարչարանք, ասում է մի ուրիշը. արժէր ծախսել մի գումար-500 ր. թողնել բան ու գործ, վեր կենալ Ռումանեայից գալ Էջմիածին մի Սուրէնեան ընտրելու համար:

Բուռ պայքար... ջանքերի լարումով տապալումն ամենամեծ հակառակորդի, իրանց իսկ ճանաչած խոհուն, գիտուն վարչական այլևայլ ձիրքերով օժտւածին և յանուն ինչի՞... հարկադրութեամբ որի...

Այդ հարցը տւին թիւրքահայ պատգամաւորներից շատշատերը, սակայն աւանդ, միայն այն ժամանակ, երբ ծանր երկունքն անցկացնելուց յետոյ լննարդէն ծնել էր մոկը:

Գ. գլուխ

Ընտրեալ Սուրէնեանը եւ միւս թեկնածուները (կեղծ եւ իսկական ընտրելիներ)

I

Յոյց տալու համար թէ որքան մեղաւոր էին իրանք պարտւած մեծամասնականները Խնտրիգայի յաջողութեան համար, ստորեւ բերում եմ բնորոշ գծեր նոցա անհաստատ, այլալւած, խառնիխուռն դէպքերի, որ ցայտուն կերպով երևան եկաւ Դեկտեմբերի 12-ի վերջին դռնիսկ նախնընտրական ժողովում:

Այդ ժողովը զբաղւեց քառանուն ցանկից երկսի ընտրութեան խնդրով: Բոլոր ճառախօսներն անխաիր, որոնց մէջ փայլեցին Թորգոմ եպիս. և «Ժամանակ»ի խմբ. Ն. Տ. Անդրէասեանը, զբւատում են Դուրեանին, որպէս գերարժան առաջին ընտրելի:

Չափները երկսի են բաժանւում երկրորդ թեկնածուի նկատմամբ: Խորհրդաւոր լռութիւն էին պահպանում մեզ ծանօթ Սուրէնեանական վարդապետները: Ըստ արժանաւորութեան՝ բոլոր ճառախօսներն էլ երկրորդ տեղը յատկացրին Մեսրոպ եպ. -ին. բարձրացրին նրան ձիրքերով, գիտութեամբ, կամքով կայլ նրան վերագրած բարեմասնութիւններով: Ստ. արք. Յովսէկիմեանին ասում են, որ չեն էլ ճանաչում և չեն հաւատում, որ նա որևէ աչքի ընկնող առաւելութիւն ունենայ և հաւասարելի նյնիսկ Սուրէնեանին: Վերջինիս էլ զուրկ են համարում Մեսրոպ եպ. -ի բարեմասնութիւններից, չունի ասում են ձեռներեցութեան ոգի, ծեր է և միայն յարմարւող, հազիւ հազ խորհրդատուներով գործերը եօլա տանող, միայն եղածը զգուշութեամբ պահպանող և ոչինչ չաւելացնող:

Այս մարդկանց առաջին թեկնածուն Դուրեանն է, բ. -ը Մեսրոպը, երրորդ տեղում մնում է Սուրէնեանը: Կամաց-կամաց ջահէլ ճառախօսներից յետոյ, վեր են կենում հմուտ, փորձւած, երևիլի գլուխներ. ընդունում են բոլոր այն առաւելութիւնները, որ նախորդները վերագրեցին Մեսրոպ եպ., և այն թերութիւնները, որոնցով յայտնի է տեղակալ Սուրէնեանը. այնուամենայնիւ իրանց երախտապարտ զգացին երկրորդ տեղն անպայման յատկացնել վերջինիս:

Պարզ է, թէ որչափով անսկզբունք էր գործում մեծամասնութիւնը, երբ քառանուն ցանկի մէջ էր մտցրել իւր չճանաչած, կասկածելիին և ճանաչած թերուսին: Մինչդեռ «քառանուն ցանկի մէջ մտնողներին համարում էին... գահին արժանի...» Հակառակորդի իրաւացի պահանջը մերժելու համար օգուտեցին սկզբունքից. հէնց հետեւալ օրը դաւաճանեցին իրանց՝ մոռացան սկզբունքը: Նոքա բոլորեքեան համաձայնեցին քառանուն ցանկի մէջ մտցնել իրանց ամենեին չճանաչած Ստեփաննոս արքեպ. և իրանց ճանաչած անկարող, անարժան Սուրէնեանին:

Նոցա անձնադաւաճանութիւնը դեռևս այնքան սև չէր լինի, եթէ նոքա պայմանաւորւէին անարժաններին մտցնել քառանուն ցանկի մէջ զոնէ սևացնելու պայմանով, ինչպէս Իդմիրլեանի ընտրութեան ժամանակ արին: Մինչդեռ նրանց շարքերից մարդիկ են հանդէս դալիս օր յայտնի իրաւաբանի հոչակ ունեցող մէկը և ուրիշները ու առաջարկում են երկրորդ թեկնածու ընտրել Սուրէնեանին, պատիւ արած լինելու համար նրան: Այդպիսիների ամենաամօթալի պաշտպանութիւնը ոչոք չի հակաճառում: Եւ չէ որ նոյն օրը միաձայնութեամբ էին նրան մտցրել քառանուն ցանկի մէջ միայն 3 հոգի են մերժել Սուրէնեանին, զոքա էլ երևի տա-

ճարից դուրս չեկած Օրմանեանականները կ'լինին, 2 ձայնով աւելի Դուրեանից

Տ. Յովհաննիսեանն է այդ իրաւարանը. ահա նրա ճառը: «Մեսրոպ եպ. իմ բարեկամս է. ես նորան ճանաչում եմ անձամբ: Նա ունի բոլոր այն արժանիքները, ինչ որ թւեցին ճառախօսները: Սակայն մենք չպէտք է մոռանանք, թէ ռրպիսի ծառայութիւն մատուցեց հ. տեղակալը այս ընտրական գործում, կասկածի և վտանքի ենթարկելով իւր անունն ու հեղինակութիւնն անգամ: Ընդունելով, որ բոլոր արժանիքներով հ. տեղակալից բարձր է Մեսրոպ եպ., այնուամենայնիւ ես առաջարկում եմ երկրորդ ընտրելի Սուրէնեանին:»

Այդ նոյն միտքը, որ ճառախօսը միքանի անգամ կրկնեց, եթէ չեմ սխալուում, ընդունեց և նախագահ Ս. Յարութիւնեանը՝ նոյն ոգով միքանի խօսք ասելով:

Ընտրութեան գործում ձեռն յայտնի չէ Սուրէնեանի մատուցած ծառայութիւնը, ո՞վ չգիտէ թէ որպիսի արատ է բերում նրա անւանը այդ արարքը. որքան տըլմար, որքան խաւարամիտ են Օրմանեանի հակառակորդները որ ամբողջ ազգի առաջ ուզում են կեղծ վըկայական տալ Սուրէնեանին, հաւատացնելու թէ նա է հայրապետական գահի կանգիտատը՝ երկրորդ արժանատի ընտրելին. և այդ միայն նրա համար որ Սուրէնեանը ոչ իբր Օրմանեանի գաղափարական հակառակորդը, նրա դէմ պայքարող անհատ է հրապարակ եկել, այլ իբրև «մեծ ծառայութիւն մատուցանող», ժողովրդական ընտրութիւնը խարդախելով:

Ընտրութեան օրը նրա անունից, գործադրւած խարդախ միջոցներով ընտրւած պատգամաւորները գալիս են, վկայում այդ արատը և այդպիսի մի յանցագործութեան համար նրան ամբողջ ազգի երկրորդ

ընտրելի ուզում հրատարակել. իսկ այդ քայլը, իբրև տակտիքական տրամար անհեռատեսութիւն, առաջ բերեց տեղակալ Սուրէնեանի անսպասելի ընտրութիւնը: Մասամբ հասկանալի դարձաւ կարծեմ թէ ռիվեր և ռրպիսի մարդկանցից են աղղւած՝ այն 26 հոգի խաւած աշխարհական պատգամաւորները: Եւ այս նպատակը հանգամանքը ինչպէս արագ և ճարպիկ կերպով շահագործեցին էջմիածնի ինտրիգանտները: Իրանք իրանց ոտքոյն եկան ու ընկան թակարդը, ցրեցին միայն Դուրեանին տալիք ձայները:

Այդ ժողովում տեղի ունեցաւ փորձի համար գաղտնի քէնարկութիւն, որով միաձայն ընտրեց Դուրեանը: Ինչպէս ինձ ժողովից յետոյ անմիջապէս յայտնի եղաւ, երկրորդ ընտրելի հէնց այդ ժողովում Սուրէնեանը. մինչդեռ թերթերում Մեսրոպին են համարում ընտրւած:

Իմացւեց և այն, որ Մեսրոպական աշխարհականները ուղեցել են դաւադրութիւն սարքել և սևացնել Սուրէնեանին, սակայն վերջինիս հովանաւորներն աւելի ճարպիկ են գտնել և այդ շնորհիւ յատկապէս Մատթէոս վարդապետի սատանայական ճարպիութեան:

II.

Տիրող պայմաններում և այդ պայմաններից անկախ որոնք էին իսկական կաթողիկոսացուները, դատելով արժանիքների տեսակէտից՝ ժամանակակից հասկացողութեամբ:

Վերջապէս տանք մեր արդի այն եպիսկոպոսաների անունները որոնց ընտրութեան մասին խօսք է լինում:

Մինչև այժմ փաստապէս գոյութիւն ունեցող երկու հոսանքները այսպէս են բաժանում այդ անուն-

ները 1) Դուրեան, Մեսրոպ, Սուրէնեան և Մուրադբէգեան, 2) Օրմանեան, Կարապետ, Սուքիաս և մասամբ Բարգէն կայ. Կիւլիսէրեան:

Այդ բաժանումը մենք համարում ենք բռնագրօսիկ և անիրաւացի, հակասկզբունքային:

Առաջին հոսանքը՝ դա ազատամտութեան անւան տակ գործող բանակն է: Նա յաւակնութիւն ունի իրան վերապահելու յառաջդիմական— ժողովրդական ըսկզբունքներ, ազատ հայեացքներ, ղիւնւած իբր գիտութեան ամենավերջին խօսքով. իսկ իւր գիմաց յետագիմական հակաժողովրդական, կղերական հասկացողութիւններով մոլորւած բանակը և նոցա թեկնածուներն է տեսնում:

Թեկնածուների վերոյիշեալ բաժանման մէջ սկզբունքային ոչ մի հիմք չ'գտնելով, պատգամաւորական ժողովը այսպէս պիտի անէր իւր բաժանումը 1. քառանուն ցանկի մէջ մտցել ա. Դուրեան և Օրմանեան, բ. Կարապետ և Մեսրոպ:

2. Միջակ անձնաւորութիւն. ոչ արժանի կաթ. ընտրելի համարելու ա. Սուրէնեան և Սուքիաս (ծերութեան պատճառով) բ. Մուրադբէգեան, Յովակիմեան և Կիւլիսէրեան: Դուրեանի թեկնածութիւնը ամենից առաջ դնելու պատճառը իշխող մեծամասնութեան և յատկապէս տաճկահայ պատգամաւորների տրամադրութիւնն է և վերջիններիս տւած վկայութիւնները նրա մասին: Օրմանեանին երկրորդ թեկնածու պէտք էր նշանակել նրա նկատմամբ մասսաների և փոքրամասնութեան տաճած համակրանքի և վերջինս վկայութիւնների պատճառով:

Այդ երկուսն էլ մեզ ուսասնայերիս ճանաչած ընտրելիներից ամենաարժանաւոր Կարապետ կալիսկոպոսն է, որ աւելի բարձր անհատականութիւն է, ա-

ւելի ճանաչած հեղինակութիւնը, քան Մեսրոպ կալիս., որին արդէն իւր տեղն է յատկացրած քառանուն ցանկի մէջ:

Ժողովրդի մէջ բարձրացել է Օրմանեանի անունը, նա դառել է և իրական և իրէալական մի անձ, հեղինակութիւն, նա վաստակում է ուսասնայ ժողովրդի բարեկամութիւնը: Դուրս է եկել Սուրէնեանը և խարդախութեամբ գործել է խորտակելու ամբողջ ժողովրդի ցանկութիւնը: Օգտւելով իւր դիրքից և իշխանութիւնից խեղդել է ժողովրդի ձայնը: Նրա արարմունքը համապատասխան է իւր միքանի առերես կուսակիցների տրամադրութեանը:

Յայտնի է, որ նրա ընտրութիւնը այսօր հիասթափութիւն է առաջացրել:

Ուրեմն ինչպէս պիտի Սուրէնեանը ստանձնի այն պաշտօնը, որով նա կոչւելու է հայր, հովւապետ իշխանաւոր իւր արհամարհանքին ենթակայ և նրան արհամարհող ազգաբնակչութեան, երբ նա չի ստանձնում կաթուղիկոսութիւնը ազգի և եկեղեցու կամքով:

Այդ բոլորից յետոյ միթէ հակասութեան մէջ չէ՞ ինքը հասարակութիւնը. կարճը անտարբեր մնալ ուսասնայ ժողովուրդը, երբ նրա ձայնը խեղդուում է ոչ թէ բազմութեան մէջ օրինական կարգերում, այլ այն վարիչի ապօրինի գործողութիւններով, որը զօռով փաթեթուում է նոյն այդ ժողովրդի վզին, նրա ընտրելին թաթուում է նոյն այդ ժողովրդի լիցին, եթէ դիսցիպլէ դառնում. ինքախարէութիւն չի՞ լինի, եթէ դիսցիպլէ դառնում:

Փոքրաթիւ ուսասնայ պատգամաւորների ձայները եթէ խեղդելին բազմաթիւ տաճկահայ իսկական պատգամաւորները, այդ մի ցաւ չէր պատճառի, մենք դրանում տաճկահայերին չէինք մեղադրի: Ակամայ

կ'հաշուէինք չարիքի հետ, մեղաւոր չճանաչելով տաճկահայերին այդ անարդար օրէնքի գործադրման. անտանելին այն է, որ այդ փոքրաթիւ ազգաբնակիւթիւն ունեցող թեմերը զուրկ եղան մարդէլային տարրական արժանապատուութիւնից անգամ, թոյլ տւին անձանօթ մարդկանց իրանց անունը շահագործելով իրանց կամքին հակառակ ընտրութիւն կայացնելու:

Գոնէ սաճկահայ թեմերը օդուէին իրանց առաւելութեան մենաշնորհից. իրանց ներկայացուցիչն ուղարկէին, կամ ազատ կերպով ուստահայերից ներկայացուցիչներ ընտրէին, փոխանակ խաղալիք դառնալու տխրահոչակ Մանկունիների և Սուրէնեանների ձեռքին իրանց ընտրելու իրաւունքը դոցա վերապահելով:

Եւ ինչպէս անխիղճ է վարւել ինքը Սուրէնեանը, որ մի քանի կարգին մարդկանց փոխարէն պատգամաւորացուներ է առաջարկել ամենատիմար ու տգէտ մարդկանց. Սեանի անգրագէտ միաբանից, Արիստակէս Զուլօյեան, Արշարունի և այլ վարդապետներից, նորեկ արեղաններից աւելի կարգին մարդիկ չգտաւ ուստահայ հոգևորականներից առաջարկելու տաճկահայերին: Որքան ստորնութիւն, որքան ցածութիւն:

Եթէ հարցնէք Սուրէնեանի քթի տակ գտնւած և նրա իսկ նախկին Երևանի թեմին, կըտեսնէք որ այդ թեմում ապրող ժողովուրդը նրան մինչև անգամ չի ճանաչում յականէ կամ յանւանէ: Իսկ պատուիրակային ժողովը հազիւ է նրան քառանուն ցանկի մէջ մուծել՝ իրրև ոչ առաջին և ոչ երկրորդ ընտրելի:

Սուրէնեան սրբազանը Թիֆլիսի նախկին թեմակալ առաջնորդն է. և եթէ եղել է մի ասպարէզ, վայր, ուր նա երբևէ ուշադրութեան արժանի գործ է կատարել այդ կարող է միայն Թիֆլիսը լինել և սակայն այդ թեմի և ոչ մի պատուիրակ լսելի չարաւ նրա ա-

նունը, իրրև ընտրելի: Աւելին տեսանք, ազգաբնակիւթեան ու պատուիրակների ջախջախիչ մեծամասնութիւնը տեցնրա ուղղութեանը (եթէ միայն հաւատանք որ նա ունի ուղղութիւն) միանդամայն հակառակ և նրան սևացնող պատգամաւոր: Սուրէնեանի նախկին երեք թեմերից ոչ մէկը. թէկուզ չ'յիշուծս Աստրախանը չհամարեց նորան ընտրելի:

Ուրեմն ո՞վ ընտրեց Սուրէնեանին:

Եւ ինչպէս պիտի այտուհետև կեղծի իրան ուստահայ ժողովուրդը: Ի՞նչպէս նա կարող է երես չգար Սուրէնեանից և ենթարկւել նրան իրրև պատրիարքի երբ սա ազգընտիր լինելու փոխարէն անձնընտիր է: Եւ ոչ մի անգամ մեր պատմութեան մէջ մենք չենք հանդիպի այդպիսի մի դէպքի, երբ թայֆայական հաշիւներին հայրապետական զահն էլ այսպէս անխղճաբար զո՞ գնար: Կո՞ւմ է, զի՞տէ այդ բոլորը հայ ժողովուրդը:

Եթէ զիտէ նա թող գարշի այն վանդալներից, որոնք արշաւելով էջմիածին խլեցին հայրապետական դահը և գերեցին հայ եկեղեց. հաստատութիւնները ու յանձնեցին նրան, որը անքան նսեմ է, անքան զուրկ հմայքից:

### III

Եկէք ու ազգի պարծանք համարող մարդուն համեմատեցէք փոշիների միջից դուրս եկած ոմն Սուրէնեանի հետ:

Սակայն փաստը մնում է փաստ. այսօր նա է համարւում ժողովրդի ընտրեալը:

Ահա ձեզ տգիտութեան յաղթանակը զիտունների ձեռքով՝ 2—3 ճիւղերի. յետ ընկած վանականների ձեռքին գերի մնացած, նրանց ոյժով իւր անւանական իշխանութիւնը պահպանող Սուրէնեանը, որ գտըն-

ւում էր մի այնպիսի արեղայի ազդեցութեան տակ: Իրը գեռ երէկ աշակերտական նստարանների վրայ էր և գէթ երկու ընկերոջ վրայ էլ ազդեցութիւն չունէր իրը հայութեան կամքով ազգային եկեղ. գործերը պիտի վարի. ինքնախարէութիւն չէ: Մի այնպիսի անկում ինքնուրոյն խելքից գուրկ մէկը, որը ուրիշ խորհրդատու չճարելու դէպքում լսում է ինչ-որ գինեպան Սարգսին կամ իւր ծառային, այսօր է կոչւած Լուսաւորչի գահը ժառանգելու, համայն ազգի և եկեղեցու պետը, նրա հաստատութիւնները, դպրոցների տէրը համարելու և ամենաբարձր խելքի և զիտութեան կարօտ գործեր կառավարելու:

Մեր կաթողիկոսացուն չունի Բարձրագոյն կըրթութիւն: Բազմաթիւ միջակ կըրթութեան տէր մարդկանցից հազիւ մէկն էլ նրան կարելի է համարել:

Միաժամանակ ինքնազարգացմամբ էլ առաջադիմածի մէկը չի երևում նա: Չունի պատրաստականութիւն, չունի ինքնուրոյն գրական և ոչ մի գործ:

Որևէ առանձնայատուկ ընդունակութիւններ երբէք չի ցոյց տւել, որևէ ընդունակութեան ժառին խօսք անգամ լինել չի կարող: Ամեն ոք խոստովանում է, որ հին մարդկանցից օր. Սուքիասը բարձր է նրանցից, նոյնիսկ Յուսիկ արքեպ. -ից աւելի ցած են դասում նրան: Նա սրան էլ է նմարկւում:

Ժողովրդականութիւն չունի ու չունի, եթէ չհաշւենք Թիֆլիսի մի քանի տէրտէրներին:

Նա ինչպէս պիտի յանձն առնի ազգային հաստատութիւնների տեսուչների վրայ տեսչութիւն անելու պաշտօնը, նա ինչպիսի խոհեմութիւն կարող է բանեցնել պառակտւած կեանքում հաշտութիւն կայացնելու, երբ ոչ ոք չի պատկառում նրանից, և ինչպէս նա պիտի դուրս գայ այն ժողովրդի մէջ, որը նրան չի

յարգում, որը նրա անունը լսել անգամ չի կամենում:

IV

Ահա թէ ուր ենք հասել մենք, ինչպէս է այլասեռել մեր կեանքը: Ահա թէ ինչպէս են բռնաբարւած հայ ժողովրդի իրաւունքները, ինչպէս է արհամարհւած իրաւունքի և իշխանութեան աղբիւր այդ ամենաբարձր ինստանցիան. փաստացիօրէն, ուլքեր են փոխարինել նրան:

Պէտք է թոյլ տայ հայ ժողովուրդը իւր իրաւունքների բռնաբարւումը, նա կարող է ներել յանցաւորներին, բաւական չէ որ այդ մի քանի վարդապետ եպիսկոպոսներն իրանց տխրահոչակ խաղը խաղացին ժողովրդի ներկայացուցիչների գլխին, բաւական չէ որ նոքա դառան փաստացիօրէն դրութեան տէրը, այսուհետեւ էլ նոքա շարունակում են մեծամեծ ջանքերով թայֆայի մշտական մենաշնորհը դարձնել էջմիածինը: Նոքա դժոխային պայմաններ են ստեղծում հակառակորդ՝ օրմանեանական համարւող միաբանների համար և փախցնում են նոցա Մայր Աթոռից:

Վանք մտնել կամեցող երիտասարդների խոստովանայր է կարգւած գող արքեպիսկոպոս Յուսիկը: — Դու գիտես, ասում է նա, որ վանքում գոյութիւն ունեն երկու կուսակցութիւններ, մենք պիտի իմանանք թէ որի են պատկանում:

Բաւական է մի փոքրիկ անզոյշ ակնարկ, չնչին մի առիթ, որից կասկածի ենթարկւի խնդրատուն. խկոյն պատրաստ է բարեկամական խորհուրդը—խնդիր չտալ սպասել:

Իսկ երբ արդէն մէկին յաջողւել է միաբանութեան մէջ մտնել և օրմանեանական-կարապետական կուսակցութեան պետականելու մէջ է կասկածւում, այն ժամանակ տեղակալի անունից ամենօրեայ սպառնալիքները կախւած են նրա գլխին: Նա արդէն ատելութեան առարկայ է, ամեն ոք վախենում է նրա հետ շփւելու նրա հետ խօսելուց, որպէս զի ինքն էլ անտեղի կասկածների չենթարկւի:

Չգիտեմ ինչպէս պիտի վերաբերւի ինչպէս պի-

տի հաշուի ժողովուրդն այս տխուր կացութեան հետ:

Այլ և յայտնի է, որ ցիրուցան եղած էջմիածնի օրմանեանական միաբանների մէջ են մեր գիտուն, համալսարանական կրթութեան տէր հոգևորականները ամենամեծ մասը, ամենափայլուն ներկայացուցիչները Կարապետ, Օրմանեան, Գարեգին, Տիրայր, Բենիկ, Կոմիտաս, Յուսիկ և այլն, մարդիկ, որոնք կենդանութիւն ու ոգի էին ներշնչում էջմիածնին, հոգի էին տալիս ձեւարանին:

Սոքա բոլորն այժմ անխտիր ենթակայ են դրութեան տէրերի հալածանքին, որոնց ամենափայլուն ներկայացուցիչները ենթարկեցին անմիտ ամբոխի բռնութիւններին:

Եւ այսօր, երբ հռչակաւոր գիտնականը իւր գոյնստն է անում, մեր ազգային կեկեցեցու պաշտպան է հրապարակում նշանաւոր հայ կրօնաւորին, մեր կոյր կուսակցամոլները նրան բողոքական միսիօներական ընկերութեան անդամ են յայտարարում մոլորեցնել կամենալով անտեղեակներին:

Տասնեակ տարիներ է Կարապետ եպ. գործում, իբրև տեսուչ, ուսուցիչ, քարոզիչ, առաջնորդ... Եւ ո՞վ է նկատել նրան բողոքականութիւն տարածելիս: Չարժէր յիշել անգամ այդ մասին, ամօթ է:

Նոքա տեսան լոյսը, կուրացան և ուղեցին խաւարին հաւասարեցնել նրան:

Թողին լոյսը, գնացին խաւարի յետևից. մոռացան ամենքից անխարդախ, բոլորի բարեկամին և գընացին դէպի նախանձներն ու չարերը:

Ազատամիտ Սուրէնեանին նոքա հակադրեցին պահպանողական Օրմանեանին, Կարապետ եպիսկոպոսին...

Նոքա կուում են ամեն տեսակի ղէնքերով. նրան որին համարում էին կղերական, կաթօլիկ Օրմանեանի աշակերտ, այժմ էլ հրապարակում են բողոքական, միսիօներական ընկերութեան պատկանող:

Այդ մարդիկը կամ իրանք տխմարներ են և կամ մեր հասարակութիւնն են յիմարի տեղ զրել, ասացեք խնդրեմ, ի՞նչպէս են հաշուում իրար հետ այդ հակա-

սական յատկանիշները: Ինչո՞ւ է լոււմ նոցա բերան «Հորիզոնը»: Նրան հալածում են, դատապարտում թէ կղերականութեան և թէ ազատամտութեան համար: Նա համ նեղ, յետադէմ կրօնաւոր չէ, ի՞նչ իրաւունքով է եպիսկոպոսական աստիճան ընդունել և այլն:

Սղծո՞ւկ մարդիկ:

Այժմ տեսնենք ազատամիտների ներկայացուցիչներին (sic):

Ո՞վքեր են այդ Խորէնը\*, Բազրատը, հազիւ հազ համալսարանի դռնից ներս նայելու բաղդ են ունեցել. անդիպլոմ մարդիկ, մի երկու տարւայ ազատ ուսանողներ:

Եւ կամ ո՞վ է, ինչպե՞ս զոցա պարագլուխ Մատթէոսը—կատարեալ սատանայապետ, անկիրթ, սևահոգի անձնապաշտ:

Մի հատիկ բացառութիւն, մի Մեսրոպ Մազրիստրոս յորջորջեալը, որին ամեն բոպէ և հէնց իւրայիններն են ոտնահարում:

Մեծամասնական մնացած միաբաններն աչքի են ընկնում իրանց անհատականութեան և կրթութեան ցածրութեամբ, միայն և միայն պաշտօնի ձգտող և իւրար ատող են նոքա: Դոցանից շատերը, որոնք առաջին դէպքերն են գրաւել, մինչև անգամ միջնակադդ կրթութիւն էլ չունեն:

Դեռ յայտնի չեղած թէ Օրմանեանականները մեծամասնութիւն են դառնալու թէ փոքրամասնութիւն, արդէն յայտնի էին նոցա առաջին, երկրորդ և միւս ընտրելիները: Դասաւորում են արժանաւորութեան կարգով. և ոչ ոք նոցանից չէր ոտնահարում մէկին ի հաշիւ միւսի—անձնական չունի զրգւած:

Մինչդեռ հակառակ տեսաբան է ներկայացնում մեծամասնական բանակը, մեծամ. հոգևորականութիւնը:

Ահա զոցա խաղարկութիւնը. մէկն ասում.—ճանս (վէկս) ալչու կ'կանգնի, եթէ ընտրել Մեսրոպը. միւսը անի թէ ընտրել տեղակալը:

\*) Ես էլ գիտեմ, որ Խորէնը տգէտի մէկն է. ի՞նչ համալսարանի մասին էք խօսում, նա այդպիսին չէ տեսել: Մ. գրաշարիք:

Անտէր է մնացել մենակ Դուրեանը. ոչ ոք չի բախտաւորում նրա ընտրեալովը: Նրանով էլ Տաճկահայերն էին բախտաւորելու:

Չկայ սոցա մէջ գաղափարական միութիւն. փոխադարձ անձնական հաշիւներից զատ չկայ ոչ մի ներքին հոգեկան կապ:

Մեծամասնական միաբաններին մխիթարութիւն պատճառողը նախ գաղափարի արտաքսումն է վանքի պարիսպներից:

Այժմ նրանք մենակ են և կարող են շարունակել յաղթելով ու պարտելով, մէկը միւսին քցել ու բարձրացնել:

V

Իսկ հասարակութիւնը... լուս հանդիսատեսի դեր պիտի կատարի...

Ժողովրդական տրամադրութիւնը արտայայտում է: Նրա համար իդէալական մեծութիւն, ոգևորականութեան աղբիւր է դառել Օրմանեանը: Օրմանեանի փոխարէն, նա կարող էր ընդունել Թեքեա Դուրեանին. սակայն նրա տեղը զիջել է Սուրէնեանին. ազգն երբէք չի կարող հաշտել այդ մտքի հետ:

Եթէ Օրմանեանի անձնաւորութիւնը դառել է զգացմունքների ոգևորութեան անսպառ աղբիւր, անսահման հեղինակութիւն, զրա փոխարէն նոյն այդ ազգի սառը, կշռադատող գիտակցական հայեացքները սեւեռում են Կարապետ եպիսկոպոսի վրայ. միակը իւր պատրաստականութեամբ, լուսատեղեակը ուսանայ իրականութեան և միակը իբրև օղակ կապող երկու ծայրայեղութիւնների, նոցա մեղմող հանգամանքը, հաշտեցման կէտը: Գիտակցական վերաբերմունքը, որ պէսզի չվտանգուի ազգային ամբողջութիւնը. որպէսզի չվտանգուին մեր իրաւունքները այն կաթողիկոսի օրով որը միայն ոյժ ունենայ լուծելու կրիզիսները, անվրտանք դարձնելու այն տագնապները, որոնք ամեն բուպէ դամոկլեան սրի պէս մեր եկեղեցու գլխին են կախւած: Ժողովուրդը յիշում է կալւածների գրաւման, զըպրոցների փակման տագնապալի օրերը. նա թող իմա-

նայ որ ոչինչ է այդ օրերի համար վախճա Սուրէնեանը:

Չայ ժողովուրդ! հրապարակի վրայ մարդիկ ունիս, որոնք քո պարծանքը են կազմում քաղաքակիրթ աշխարհի առաջ. դու կամենում ես և պիտի լուծը նոցա վզին դնես Սուրէնեան ընկճած խեղճ, նա չի կարող իւր ուսերին կրել Գողգոթայի ծանր լիսաչը, նա մեռած չէ: Դու ունիս անհունապէս քեզ սիրող, քեզնով ոգևորող, քո շահերով տոգորւած, քեզ ճանաչող, քո անցեալն իմացող, քո ապագայի յառաջադիմութեան համար նահատակող կենդանի մարտիրոսները, որոնք դեռ ևս չեն մեռել և քանի շունչ ունեն էլի քեզ համար են մտածում քեզնով ոգևորում:

Նոքա վայելցին լուսաւոր աշխարհի գիտութեան պտուղները 20-րդ դարու լուսամիտ գաղափարներով տոգորւած իրանց կրօնական բարձր հասկացողութիւններով պաշտպանելով ազգայինը, յանդգնութիւն ունեցան քաղաքակիրթ աշխարհի առաջ դուրս գալ. և սակայն նոքա հրաժարեցին եւրոպայի դպիսիներից և եկան ծածկեցին փշէ պսակները...

Ի՞նչ արտայայտութիւն պիտի ունենան այսօրւայ դժգոհութիւնները, ինչ պիտի ուզենայ և ի՞նչ կարող է անել ուսանայ ժողովուրդը, որին մենակ չեն ձգի և տաճկահայերը:

Եթէ այս ընտրութիւնը, սխալ թէ ուղիղ, կատարել է ժողովուրդը, նա պիտի քաւի իւր ձեռքով կատարած յանցանքը: Եթէ այս ընտրութիւնը ժողովուրդը չի կայացրել, այլ զլուխ է կէկել զանազան միջոցներով նպաստաւոր հանգամանքներում, ինչպէս ապացուցինք այս գրքում, բայց եթէ միևնոյն ժամանակ այդպիսի գործողութեան հետեանքը որեւէ մխիթարութիւն կարող է ներշնչել մեր հասարակութեանը, այն ժամանակ թող վերջինս հաշտի իրականութեան հետ:

Իայց ի՞նչ է լինելու հասարակութեան անկիւրը, երբ նա տեսնում է, որ տգեղ միջոցներ տգեղ էլ հետեւանք են ծնել. երբ զբանով նրա և թէ իր իրաւունքները բռնաբարւած և թէ պատիւը արտաւորւած է: Միայն վրդովելը, լուրայն վշտանալն քիչ է:

Չպէտք է թոյլ տալ, որ շարունակելի անտէրութիւնը, կամայականութիւնը, կաշառակերութիւնը և գողութիւնը էջմիածնում. հերիք է, և մինչև երբ այդպէս... Ժամանակ է վերջապէս բժշկել էջմիածին, փրկել նրա կեանքը, ազատել նրան այդ բացիւններից, որոնք վարակել են նրա կեանքը փչացրել մթնոլորտը:

Հերիք որքան ծծեցին նրա հիւթերը, քայքայեցին նրա առողջութիւնը: Կազդէ վերջապէս Սուրէնեանը կըկատարի ազգի կամքը, թէ պինդ կըռնի և ձեռքից բաց չի թողնի հազիւ հազ գրաւած գահը. դժւար թէ.... Հասարակութիւնը այնուամենայնիւ պէտք է արտայայտի, անի այն, ինչ որ պարտաւոր և կարող է. նա քաղաքական այս օրերում թող հաշի աւնի կառավարութան բարեհաճ տրամադրութիւնը. մենք համոզւած ենք որ Ռուսաց կառավարութիւնը կվարանի վաւերացնելու այն ընտրութիւնը, որը չի կատարել ժողովուրդը իրան շնորհւած իրաւունքներով, որը հասարակութիւնը կատարեալ կեղծիք է համարում:

Քայքայման մէջ է, կորստեան բերնին կենսունակութիւնից զրկւած մեր ազգի գարաւոր ուղեղը, ս. էջմիածին և ինչ պիտի լինենք մենք երբ փտում է մեր ուղեղը, մեռնում է մեր նւիրական զգացմունքների առարկան. ազատեցէք էջմիածինը... Սթափւած հասարակութիւն ոտքի կանգնիր, ինքդ պաշտպանիր քո շահերը, փրկիր էջմիածինը՝ համայն հայ եկեղեցին, ձեմարանը՝ բոլոր հայոց զպրօցները, եթէ քո սրտիդ մօտիկ ես զգում այդ բոլորը, եթէ ուզում ես ապրի այդ ամենը.

Պէտք է մաքրել այս արատը:



460  
~~1950~~  
~~1124~~

«Ազգային գրադարան»



NL0160937

7163

ԳԻՆՆ Է՝ 20 ԿՈՊԵԿ